



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՀԱԹՍՈՒՆԵՐԻՈՒ



Ներկայացման իրաւունքները վերադառնում են հեղինակին:

291-99  
U

✓

ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ

ՀՈՐԻԶՈՆՍԻՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 1981 թ.

ԴՐԱՄԱ

ԶՈՐՍ ԱՐԱՐԻԱԾ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

ՎԷՍՂՆԱԿՆԻ

ԴՐԱՄԱ՝ ԱԿԵՏԻՍ ՍԷԼԵԱՆԻ

ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆ



ԵՐԵՎԱՆԻ ՏՊԱՐԱՆ

ՆԻՒ ԵՈՐԲ

1936



Ներկայացման իրաւունքները վերադառնաւ եմ հեղինակին:

891-99

U

✓

# ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ

# ՀՈՐԻԶՈՆՍԻՄ

ՅԵՄԻՆԱԼ 1981 թ.

ԴՐԱՄԱ

ԶՈՐՍ ԱՐԱՐԻԱԾ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

ՎԷՊ՝ ԱԼԱԶԱՆԻ

Դրամա՝ ԱԻԵՏԻՍ ՍԷԼԵԱՆԻ

51.000-11

87858

1987



ԵՐԵՎԱՆ ՏՊԱՐԱՆ

ՆԻՒ ԵՈՐԲ

1986





ԱԼԱԶԱՆ



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Վաթսուներորդ Հորիզոնում»՝ Ալազանի այս վէպը, որ կ'արտացոլացնէ մեր խորհրդային փառապանծ հայրենիքի բանւորներու աննկուն կամքն ու պայքարը սոցիալիզմի կառուցման ճակատին վրա, առանձնապէս հմայիչ է անով, որ հիւսւած է իրական կեանքի մէջ:

Այս վէպը վերածելով թատերգութեան, նախ կուզեմ ծանօթացնել այն հերոսական բանւորները, որոնք մեր խորհրդային Հայրենիքի սոցիալիստական մեծութիւնը կը կերտեն:

Եւ սոցիալիզմը օրէ օր խոշոր յաղթանակներ կ'ապահովէ մեր մեծ հայրենիքի՝ Ս. Միութեան մէջ, որուն մէկ անդամն է Ս. Հայաստան:

ՄԱՐԲՍԻ, ԷՆԳԵԼՍԻ, ԼԵՆԻՆԻ եւ ՍՏԱԼԻՆԻ ուսմունքով կառուցւած սոցիալիզմը արդէն կ'ապահովէ ամեն մարդու համար ուսման, գործի եւ վայելիքի իրաւունքները:

Գաղութահայութիւնը ծանօթանալով այդ փառաւոր յաղթանակներուն, պէտք է աւելի կուռ շարքերով մօտենա դէպի իր խորհրդային Հայրենիքը եւ իր պարտականութեան բաժինը վերցնէ, եթէ բաց ճակատով կուզէ մասնակից դառնալ այն երջանկութեան, եղբայրութեան ու ազատութեան, որը միայն խորհրդային կարգերու մենաշնորհն է:

Երկրորդ՝ խորհրդային Հայաստանի գրականութիւնը խիստ սահմանափակ կերպով տարածւած է գաղութներու մէջ եւ հետեւարար ժողովուրդը կաշուած է խորհրդային գրական կեանքէն: Ուրեմն,

Սորհրդային Հայաստանեան կեանքէ առնւած պիէսի մը բեմադրութեամբ, մեզի անպայման կը յաջողի արծարծել այն սէրը դէպի խորհրդային գրականութիւնն ու գեղարւեստը, որ այսօր հսկա քայլերով կը յառաջանա դէպի միւնչ այժմ անառիկ բարձունքները:

Ես աշխատեցա պահել Ալազանի լեզուն (այսինքրն Արեւելահայ), որպէսզի պիէսի հարազատութիւնը ոեւէ կերպով չտուժէ: Բացի այդ ես շատ սերտ կերպով կառչեցա բնագրին, որովհետեւ Ալազանին մեծ չափերով յաջողւած է իր տիպերու բերնով խօսիլ: Հետեւաբար, ոեւէ պատճառ մը չունէի այդ խօսքերը «բարեփոխելու»:

Անխուսափելիօրէն, սակայն, կան պզտիկ տողոսով նախադասութիւններ եւ անցքեր, որոնք իմս են: Այս պատճառով ալ տարակոյս չունիմ, որ Արեւելահայ ոճի շատ մը սխալներ սպրդած են, որովհետեւ ես այդ ոճով գրող մը չեմ: Այս գործին մէջ իմ բաժինս աւելի տեխնիկական է, քան թէ գրական, եւ կը յուսամ, որ հասարակութիւնն ու քննադատները այդ ձեւով ալ պիտի վերաբերին:

Ալազանի «Վաթսուներորդ Հորիզոնում» վէպը շատ գնահատուած եւ քննադատուած գործ է: Ես համոզուած եմ, սակայն, որ եղած քննադատութիւնները Ալազանի գործի արժէքէն ոչ մէկ բան պակսեցուցին, այլ ընդհակառակը աւելցուցին անոր արժէքը:

Ալազանին յաջողւած է մեր պղինձարդիւնարեութեան բանւորներու Առաջին Հնգամեակի կեանքին մէջ հիւսել վէպ մը, ուր սէրն ու նախանձը, սպոթաժն ու վճռականութիւնը եւ սոցիալիզմի վերջնական յաղթանակը երեւան կուզան իրական գոյներով:

Այս հիւսւածքի մէջ ես աշխատեցա մտցնել  
երդ, պար եւ երաժշտութիւն, ցոյց տալու համար,  
որ մեր ժողովուրդը հերոսական մարտնչումներու  
ամենագծւարին օրերուն իսկ եղած է կենսուրախ,  
եւ այդ անընկճելի կորովով ալ յաղթահարած է  
դժարութիւնները եւ ապահոված փառապանծ յաղ-  
թանակներ:

Մէկ կէտի շուրջ ես Ալազանին հետ համաձայն  
չեմ. այն է՝ վէպի վերջաւորութիւնը:

Տակաւին այսօր, կապիտալիզմի անկման այս  
չրջանին, բուրժուական գրողները բռնադրօսիկ ճի-  
ղեր կրնեն յաղթանակի լուսապսակ հիւսելու իրենց  
հերոսներու ճակատներու շուրջ, սակայն, իրական  
կեանքի մէջ անոնք ողբալիօրէն կը խորտակւին:  
«Վաթսուներորդ Հորիզոն»ի մէջ խաղի կեդրոնական  
դէմքը՝ Ռահիմ Զալատոյ, զոհ կերթա ուշացած  
պայթումի մը. Սոցիալիզմի յաղթական վերելքի  
տեսակէտէն աւելի յատկանշական պիտի ըլլար, եթէ  
Ռահիմը Վաթսուներորդ Հորիզոնէն դուրս դար  
յաղթական՝ շրջապատուած բանւորներու խանդա-  
փառ ընդունելութեամբ եւ իր սիրուհիին անկեղծ  
սիրով եւ նւիրածութեամբ:

Ես այսօրեւ Ստախանովականներու մէջ կը  
տեսնեմ երէկւա Ռահիմ Զալատոնները: Ահա թէ ին-  
չո՞ւ Ռահիմը պէտք չէ որ մեռնէր:

Ես երբեք նպատակ չունիմ ըսելու, որ Ալազանի  
վէպի վերջաւորութիւնը իրականութեան համապա-  
տասխան չէ, այլ ընդհակառակը, շատ բնական կը  
դանեմ, որովհետեւ սոցիալիզմի կառուցումը յեղա-  
փոխութեան անրաժան մասն է, հետեւաբար առանց  
զոհեր տալու յեղափոխութիւնը չի կրնար յաղթա-  
նակել: Ինչ որ ես կուզեմ ըսել այն է, թէ մենք պէտք

է շեշտը դնենք . յեղափոխութեան յաղթանակին վրա, զոր կրնան անձնաւորել վէպի յաղթական հերոսները:

Անշուշտ ընկեր Ալազանին յաջողւած է սոցիալիզմի յաղթանակին համար մղւող պայքարի ուժը պատկերացնել, այնպէս որ, հակառակ իր հերոսի դժբախտ վախճանին, բանւորութեան սոցիալիզմի յաղթանակը ապահովելու վճռականութիւնը ճարտարօրէն կը յայտնաբերւի:

ԱԻԵՏԻՍ ՍԷԼԵԱՆ



# ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

(Բեմ Գալու Կարգով)

ԹՈՐՈՍ ՍՈՍԵԱՆ	Նկարիչ
ԴՐԱԴԵԱ ԱՆԴՐԵՅ	Մազկարուծ Մերունի Մը
ԲԱՐՍԵՂ ԱՂԱՎԵՐԴԵԱՆ	Ձուլարանի Վարիչ
ՅԱԿՈԲ ԴՈՐԻՆԵԱՆ	Վառարանների Վարպետ
ԾԱՏՈՒՐՈՎ	Էնժիներ
ՎԼԱՁԻՍԼԱՎ ԴՈՐՈՇՏԱՆՈՎ	Մատուցողի Ընկերը
ՀԱՍՄԻԿ	Կոմբինատի Քարտուղար
ԷԼԻԱ	Կոմերիտուհի
ՌԱՀԻՄ ՋԱԼԱՏՈ	Կոմերիտական եւ Հարւածային
ՅԱԿՈԲ ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ	Կոմբինատի Դիրեկտոր
ՍԵԴՐԱԿ	Շրջկոմի Քարտուղար
ԱԼԵՔՍԷԵՒ	Ճարտարապետ
ԱԴԱՄ ՍԱՀՐԱՏԵԱՆ	Մերունի Հանձնապետը մը
ՍԱՆԿԱԼԻ ԱՊՏՈՒԼԼԱՀ	Մերունի Հանձնապետը մը
ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿՈՒՆԻ	«Գրուհ» Թերթի Խմբագիր

ԲՃԻՇԿ ՄԸ, ԿԱՐՄԻՐ ԽԱԶՈՒՀԻՆԵՐ, ԲԱՆՒՈՐՆԵՐ,

ԿԻՆԵՐ, ԵՐԵՔԱՆԵՐ ԵՒՆ.

է շեշտը դնենք . յեղափոխութեան յաղթանակին վրա, զոր կրնան անձնաւորել վէպի յաղթական հերոսները:

Անշուշտ ընկեր Ալազանին յաջողած է սոցիալիզմի յաղթանակին համար մղող պայքարի ուժը պատկերացնել, այնպէս որ, հակաառկ իր հերոսի դժբախտ վախճանին, բանւորութեան սոցիալիզմի յաղթանակը ապահովելու վճռականութիւնը ճարտարօրէն կը յայտնարեբուի:

ԱԻԵՏԻՍ ՍԷԼԵԱՆ



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

(Բեմ Գալու կարգով)

ԹՈՐՈՍ ՍՈՍԵԱՆ	Նկարիչ
ԴՐԱԴԵԱ ԱՆԴՐԵՅ	Մաղկարուծ Մերունի Մը
ԲԱՐՍԵՂ ԱՂԱՎԵՐԴԵԱՆ	Ջուլարանի Վարիչ
ՅԱԿՈԲ ԴՈՐԻՆԵԱՆ	Վառարանների Վարպետ
ՄԱՏՈՒՐՈՎ	Էնժիներ
ՎԼԱԶԻՍԼԱՎ ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ	Մատուցողի Ընկերը
ՀԱՍՄԻԿ	Կոմբինատի Քարտուղար
ԷԼԻԱ	Կոմերիտուհի
ՌԱՀԻՄ ԶԱԼԱՏՈ	Կոմերիտական եւ Հարւածային
ՅԱԿՈԲ ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ	Կոմբինատի Դիրեկտոր
ՍԵԴՐԱԿ	Շրջկոմի Քարտուղար
ԱԼԵՔՍԷԵԻ	Ճարտարապետ
ԱԴԱՄ ՍԱՀՐԱՏԵԱՆ	Մերունի Հանքափոր մը
ՍԱՆԿԱԼԻ ԱՊՏՈՒԼԼԱՀ	Մերունի Հանքափոր մը
ԱՐՇԱԻՐ ՇԻՐԱԿՈՒՆԻ	«Գրուհ» Թերթի Խմբադիր

Բժիշկ. ՄԸ, ԿԱՐՄԻՐ ԽԱԶՈՒՀԻՆԵՐ, ԲԱՆԻՈՐՆԵՐ,  
ԿԻՆԵՐ, ԵՐԵՈՒՆԵՐ ԵՒՆ.

## ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այն դադութները, ուր բաւարար միջոցներ չկան պիէսը ամբողջութեամբ ներկայացնելու, պիտի թելադրեմ, որ եթէ հարկ ըլլա կրճատուած ձեւով ներկայացնել, այդ պարագային կարելի է բոլորովին անտեսել Երկրորդ Արարուածը: Այս կրճատումը պիէսին ոգին հիմնականօրէն չփոխելով հանդերձ, հնարաւորութիւն կուտա սիրողներէ կաղձած խումբերու աւելի փոքր թիւով դերակատարներով բեմադրելու:

ԷԼԻԱՅԻ դերը վերցնող դերասանուհին չպէտք է կաշկանդւի պիէսի մէջ դրուած երգերով: Ան կարող է երգել այն երգերը, որոնց մէջ ինք աւելի լաւ կրնա փայլիլ:



## ԱՐԱՐԻԱԾ Ա.

Բեմը ներկայացնում է խիտ ծառերով մի անտառ: Հեռից՝ ծառերի արանքում նշմարում է բարձր բլուրներ եւ նրանց ստորոտը ձուլարածը իր բարձր ծլօնալոյծով: Բեմի ձախ անկիւնը կա մի ցանկապատ, ուր ծերունի Դրադեա Անդրեյ ծաղկանոց է անեցնում: Բեմի աջ կողմը՝ գետափի մօտ՝ ժայռի վրա նստել է նկարիչ Թորոս Սոսեանը եւ առաւօտեան գեղեցիկ տեսարանն է ներկում:

### ՏԵՍԻԿ Ա.

#### ՍՈՍԵԱՆ ԵՒ ԱՆԴՐԵՅ

**ՍՈՍԵԱՆ** — (վարագոյրը բացելուն, Սոսեանը արդէն գծում է ներմակ պաստառի վրա եւ բաւականին խոշոր մի մաս նկարել է. մէկ վայրկեան ակնարկ է նետում բնութեան վրա եւ ապա իր հայեացքը դարձնելով պաստառին) *Ի՞նչ սքանչելի տեսարան, սա իմ լաւագոյն գործերից մէկը պէտք է համարել (շարունակում է կրկին գծել):*

**ԱՆԴՐԵՅ** — (Յնցուղով ծաղիկներն է ողողում եւ յակկարծ նշմարում է նկարչին ու ցնցուղը ձեռքին տեսնում է նկարչին եւ մի վայրկեան դիտելուց յետո) *Նու դա, վարպետ ես, խսկական վարպետ (գլուխը օրօրելով): Ես էլ ինձ վարպետ եմ համարում, վարպետութիւնս էլ ի՞նչ է, մանիշակ ու վարդ եմ անեցնում: Թճա՛ծ: Ես ո՛ւր, դու ո՛ւր... Դու եթէ ուզենաս՝ մեշոկի վրա էլ շուշան ու վարդ կանենես:*

**ՍՈՍԵԱՆ** — (Ծիծաղելով) *Նդրայր Անդրեյ, արդեօք քեզ չնկարե՞նք:*

**ԱՆԴՐԵՅ** — *Ռեխի՞ս ես կարօտել:*

**ՍՈՍԵԱՆ** — *Ես կատակ չեմ անում: Ուզում եմ անպայման քեզ նկարել, գեղեցիկ գոյներով:*

**ԱՆԴՐԵՅ** — *Է՛խ վարպետ, դիտեմ, սիրող բարի է, ուզում ես ծերուկս մխիթարել... Բայց իմս անցա՛ւ... Է՛խ... Է՛խ... Չահիլ ժամանակս, քանի սիրուն երիտասարդ էի, չնկարեցի, հիմի էլ նո՞ր նկարեմ... Քավթար սատանին, էլ ի՞նչ նկարել, կամ ո՞ւմ համար նկարեմ, ո՞ւմ ու-*

դարկեմ... Զլինի Այնուդային... է՛խ, սատանա: (Սոսեան կարեկցաբար կը ժպտի իսկ Անդրեյը կը շարունակէ) Այ թէ ուղում ես լաւ գործ արած լինել, վերցրու ուղչկեդ ու ծաղկանոցս շերկի՛ր, դա լաւ գործ է, արդա՛ր գործ... թէ չէ՛ր արվթառխ ունին ո՞ւմ է հարկաւոր:

ՍՈՍԵԱՆ — Ինձ է հարկաւոր, ինձ համար եմ նկարում. քո տիպը շատ հետաքրքրական է, դուրեկա՛ն:

ԱՆԴՐԵՅ — Դուրեկա՛ն, է՛խ սատանա, ինչո՞ւ ես ծիծաղում ծերուկիս վրա: Ինչո՞ւ է դուրեկան... ո՞ւմ համար եմ դուրեկան...

ՍՈՍԵԱՆ — (Բարձրաձայն) Նկարչի՛ր...

ԱՆԴՐԵՅ — Դու այս առաւօտ քո գործը լրացուր, ես էլ գնամ իմ ծաղիկներին խնամեմ... իմ նկարի մասին մի ուրիշ օր, ցտեսութիւն վարպետ (ցնցուղը վերցնելով սկսում է ֆալի դէպի ծաղկանոցը):

ՍՈՍԵԱՆ — Ցտեսութի՛ւն, ցտեսութի՛ւն, եղբայր Անդրեյ, անպայման քեզ նկարելու եմ: (Սոսեան շարունակում է նկարել, իսկ Անդրեյ պարտէզին մէջ կորսւում է):

### ՏԵՄԻՂ Բ.

#### ՍՈՍԵԱՆ, ԱՂԱՎԵՐԴԵԱՆ, ԴՈՐԻՆԵԱՆ

(Յամկապատի ֆովէն խօսակցելիս բեմ եմ մտնում Բարսեղ Ազավերդեանը եւ Յակոբ Դորինեանը եւ կանգ եմ առնում բեմի մէջտեղը):

ԴՈՐԻՆԵԱՆ — Ա՛խ այս անիծած թերթերը... (ձեռքին մէջ քերքը մտնելով):

ԱՂԱՎԵՐԴԵԱՆ — Յակո՛ր, ի՞նչպէս է քեզ դուր գալիս այս ամենը: Հաւանո՞ւմ ես: Երէկանը 75 տոկոս է, առաջի օրւանն աւելի վատ: Թերթ հօ՛ կարդում ես, լաւ են ներկում, խօսք չկա... իսկ ի՞նչ եղաւ մեր նամուար:

ԴՈՐԻՆԵԱՆ — Նամո՞ւար, նամուար հի՛չ, դու ջոհար տուր, կարմիր, պսպղուն ջոհար... նամուար չես ձուլի:

ԱՂԱՎԵՐԴԵԱՆ — Իսկ նրանք ձուլում են մեր նամուար, այնտե՛ղ, կենտրոնո՛ւմ, թերթո՛ւմ... լաւ են խայտառակում:

ՆՈՅՆՔ, ԾԱՏՈՒՐՈՎ ԵՒ ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ

(Յանկապատի մօտ նշմարում են Ծատուրով եւ Դոբրոպոլսանով: Նրանք տեսնելով երկու խօսակիցներին, կանգ են առնում եւ կծկում եւ ուշի ուշով հետեւում են խօսակցութեանը):

**ԴՈՒՐՈՇՏԱՆ —** Ես քեզ հասկանում եմ, բայց դու ինքդ էլ դիտես, որ մեր ձեռքումը ճար չկա:

**ԱՂԱՎԵՐԴԵԱՆ —** Էդ ճիշտ ես ասում, Յակոբ, բայց էդ բոլորը չի: Աշխատանքը վատ ենք կազմակերպում, վատ ենք ղեկավարում, ձեւականօրէն: Դրա համար ես եմ մեղաւոր, դու ես մեղաւոր, բոլորս ենք մեղաւոր:

**ԴՈՒՐՈՇՏԱՆ —** Իսկ կոմբինատը:

**ԱՂԱՎԵՐԴԵԱՆ —** Նա էլ է վատ ղեկավարում:

**ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ —** (Ծատուրովին, ցածր ձայնով) էլի յաջողում ենք:

**ԾԱՏՈՒՐՈՎ —** Անկասկած...

**ԱՂԱՎԵՐԴԵԱՆ —** (Նշմարելով Սոսեանը) Բարե՛ւ, վարպետ, օգտագործում էք այս ղեղեցիկ առաւօտը:

**ՍՈՍԵԱՆ —** Եւ ի՞նչ սքանչելի՛ տեսարան... Ես կարծում էի այսօր հանդատի օր է ձեզ համար, Բարսեղ:

**ԴՈՒՐՈՇՏԱՆ —** Վարպետ, երբ մեր պլանները կրիայի ֆայլերով են ընթանում, հանդատի օրը նշանակութիւն չունի:

**ԱՂԱՎԵՐԴԵԱՆ —** Յակոբ, լաւ որ յիշեցիր այդ կրիային: (Սոսեանին ուղղելով) Վարպետ, սա մեր տեմպերի տախտակների վրա մի կրիա ներկիր, որ բանւորները տեսնեն: Մեր պլանները կրիայի տեմպերով ընդանում են (Ծատուրով եւ Դոբրոպոլսանով կը ծիծաղին):

**ՍՈՍԵԱՆ —** Շատ լա՛ւ, դժեմ Բարսեղ ջան, բայց այդ օդուտ չի անի... Ես նշմարել եմ, որ մեր բանւորները լաւ են աշխատում, բայց պլանները չեն կատարում. ըսել է, որ մի տեղ մի շան գլուխ է պահւում:

**ԴՈՐԻՆԵԱՆ** — Ճիշտ ես ասում, վարպետ, այդ շանը գլուխը գտնել ճզմելու ենք: (Մատուրով եւ Դոբրոշտանով լայքւած իրար երես եմ մայում):

**ՍՈՍԵԱՆ** — (Իր իրերը հաւաքելով) էլի երթանք հենց այսօր կրիան գծենք: (Երեքը միասին կը մեկնին):

**ԾԱՏՈՒՐՈՎ** — (Ընկերոջ հետ միասին բեմին մէջտեղը գալով) Եթէ շանը գլուխը գտնեն, վա՛յ մեր գլխուն:

**ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ** — Էդ քան էլ հեշտ չի, իսկ այս հանգրստի օրը չ'օգտագործենք, այդ ուղղութեամբ մի քիչ աշխատանք չտանե՞նք:

**ԾԱՏՈՒՐՈՎ** — Այսօր տրամադրութիւն չունեմ աշխատելու:

**ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ** — Ձըլլա թէ իմ սիրելի կոչեզան սիրահարւած լինի այն սեւ աչւըներով աղանձակին:

**ԾԱՏՈՒՐՈՎ** — (Նշմարելով ցամկապատի մօտ Հասմիկի գալուստը) Տե՛ս, տե՛ս, ո՞վ է գալիս...

**ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ** — (Բացակամչելով) Հասմի՛կ...

ՏԵՍԻԿ Դ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՀԱՄՄԻԿ

**ՀԱՄՄԻԿ** — (Ձեռքերը երկաբելով եւ արագ փայլերով մօտեցնում է կնժիմերմերին եւ ձեռք տալով մրանց) Այս ի՞նչ բարեբախտութիւն է:

**ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ** — Իսկապէ՛ս... սքանչելի, հիանալի անակնկալ է... ինչ կասկած, որ մեր այս կիրակին ուրախ ու զւարթ անցնելու է...

**ԾԱՏՈՒՐՈՎ** — (Հեզմելով) Կիրակի՞... Հանդստի օր, եթէ հաճիք...:

**ՀԱՄՄԻԿ** — Հա՛, հա՛, հա՛, երեւում է ընկ. Մատուրովի ձախ թեքում է ունեցել:

**ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ** — (Խնդալով) Եւ ի՞նչ ձախ թեքում... Մի երիտասարդ կնժիմեր երբ սիրահարւում է մի սեւ աչկա 18 տարեկան եւ երբեք չհամբուրւած մի կոմերիտուհու հետ, ի՞նչպէս կարողանում է ձախ թեքում չունենալ:

ՀԱՍՄԻԿ — Հա՛, հա՛, հա՛... 18 տարեկան եւ երբեք չհամբուրւած... հա՛, հա՛, հա՛...

ԾԱՏՈՒՐՈՎ — (Քիչ մը կարմրած եւ հեզմակամ ժպիտով եւ տոնով) Կրնայի հարցնել, թէ այս առաւօտ նախանաշին ի՞նչ խմել էք:

ՀԱՍՄԻԿ — (Զարմացած) Թէ՛յ...

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Թէ՛յ, անշուշտ թէ՛յ...

ԾԱՏՈՒՐՈՎ — Եւ մէջը մի դալ Հայաստանի քոնեա՞կ:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Մի թէ՛յի դալ քոնեակ ի՞նչ վնաս է տալիս:

ԾԱՏՈՒՐՈՎ — Ինձ թոււմ է, որ ապուրի դալով էք լեցրել քոնեակը:

ՀԱՍՄԻԿ — (Իր հայեացքը աստ անդ պտտցնելով եւ հեռից էլիամ ճշմարելով) Օ՛, օ՛, օ՛, տե՛ս, տե՛ս, ո՞վ է դալիս...:

ԾԱՏՈՒՐՈՎ — (Դէպի այդ ուղղութեամբ նայելով եւ ողբուրած) Էլիս՞ն:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Ա՛խ այդ սեւ աչերը, ինձ այնպէս խաչել են:

ՀԱՍՄԻԿ — (Հեզմակամ) 18 տարեկան եւ երբեք չէ համբուրւած, հա՛, հա՛, հա՛, օ՛, օ՛, օ՛, տես ո՞վ է ընկերակցում նրան, հա՛, հա՛, հա՛, մի պարզ բանւոր, պարսիկ Ռա՛հմը:

ԾԱՏՈՒՐՈՎ — (Այլայլած եւ խոժոռ դէմքով նայում է դէպի այդ ուղղութեամբ) Հը՛ր՛ը... (գլուխը շարժելով):

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Այս ի՞նչ յուսախարու՞թիւն է որ եկաւ իմ սիրելի կուկիկայի դիտուն. կարծում եմ սենեակ դնանք, մի շի: քոնեակ պարպենք, ամեն ինչ մոռնանք:

ԾԱՏՈՒՐՈՎ — Վաստ չի լինիք: Արդեօք Հասմիկը ուղո՞ւմ է մեզ միանալ:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Անպայման:

ՀԱՍՄԻԿ — (Ժպտելով) Ամենայն սիրով (երեքը միասին քնից հեռանում են):

ՏԵՍԻԼ Ե.  
ԷԼԻԱ ԵՒ ՌԱՀԻՄ

ՌԱՀԻՄ — Ի՞նչ է պատահել, էլլիա, այսօր մի արտասու-  
վոր տրամադրութիւն էք ցոյց տալիս, մի զիչ տխուր էք  
երևում:

ԷԼԻԱ — Ո՛հ, Ռահիմ, ճիշտ էք ասում. երէկ դիշեր մի  
արտասուվոր բան պատահեց, որի հետ հաշուել չեմ կարո-  
ղանում:

ՌԱՀԻՄ — (Զարմացած) Երէկ դիշե՞ր... Ի՞նչ կարող  
է պատահած լինել:

ԷԼԻԱ — Ո՛հ, չեմ կարող բացատրել... Եէ... Եէ...  
Երազ եմ տեսել:

ՌԱՀԻՄ — (Ծիծաղելով) Հա՛, հա՛, հա՛, Երազների էլ  
հաւատում ես:

ԷԼԻԱ — Ո՛չ, Ռահիմ, ո՛չ, բայց այս Երազը չեմ կարո-  
ղանում աչքերիցս հեռացնել, մոռանալ:

ՌԱՀԻՄ — Դէ՛հ, պատմի՛ր տեսնենք. կարող է պատա-  
հել, որ Երազդ մեկնարանենք:

ԷԼԻԱ — Եկուր, սա Ժայռի վրա նստենք և մի զիչ հան-  
դիստ անենք (Երկուսը միասին քով քովի նստում են):

ՌԱՀԻՄ — Դէ՛հ, սկսի՛ր, պատմի՛ր:

ԷԼԻԱ — Իմ Երազում, ես և զու, դարձան մի պայծա-  
ս առաւօտ, քայլում էինք նեղ մի կածանով: Մերթ մաղլցում,  
կառչում մացառներից, մերթ անցնում էինք մամուսպա-  
ս Ժայռերով:

ՌԱՀԻՄ — Յետո՞...

ԷԼԻԱ — Դու իմ աջ դաստակը ամուր սեղմած քաշ էիր  
տալիս թո ետեւից: Կածանը ոլորում էր խոր մի կիրճով:  
Վերեւից, կիրճի երկու ափերից, խիտ անտառն էր աղմկում:  
Քամին սուլում էր անտառներում, և կապոյտ երկնակամարը  
փրփրում էր ճերմակ ու մուսլ ամպերով...

ՌԱՀԻՄ — (Հետաքրքրութեամբ) Ե՞... Ե՞...

ԷլիԱ. — Դու անհամբեր քայլերով կորուսւմ էիր կածանը, սրտատրոսի եւ տաղնապալի կերպով քաշ էիր տալիս ինձ քո ետեւից: Ես քեզ հետեւում էի արագ քայլերով: Ձէի դեակը ո՞ւր էինք դնում, բայց դնում էի ե՛ւ տխուր, ե՛ւ ուրախ, ե՛ւ կասկածամտ, ե՛ւ հետաքրքրութեամբ լեցուն: Անակնկալ հետանկարները դիւթում էին ինձ:

ՌԱՀԻՄ — Միշտ լուսնի մէջ էր տիրում մեր մէջ:

ԷլիԱ. — Ես լուսնի մէջ խղիցի ու քեզ հարցրի — ո՞ւր Ռահիմ... Ռահիմ Չալատո...

ՌԱՀԻՄ — Իսկ ես ի՞նչ պատասխանեցի...:

ԷլիԱ. — Դու տեսնում էիր — գնանք, իմ լաւ աղջիկ, պայծաս օր է բացւելու... Պարսկաստանում էլ յեղափոխութիւն կը լինի... իմ հայրենիքում... Ես կը դատնամ Պարսկաստանի կոմերիտ Միութեան կենտկոմի ֆարուղաբը... իսկ դու կը դատնաս իմ լաւ ընկերը, իմ ղինակիցը, իմ կի՛նը...:

ՌԱՀԻՄ — (Ոգեւորած) Ո՛հ, ի՞նչ հրաշալի երազ, էլիա, պատմի՛ր, պատմի՛ր, իմ սրտի խորքերից ես պատմում:

ԷլիԱ. — Ռահիմ, Ռահիմ Չալատո... ինձ սոսկում աղ-դողը սակայն երազիս վերջին մասն է (գլուխը ձեռքերիս մէջ քաղած, չի ուզում շարունակել):

ՌԱՀԻՄ — էլիա՛, էլիա՛, շարունակի՛ր, ես ուզում եմ լսել:

ԷլիԱ. — (Հտառչելով) Ա՛հ, եւ հասանք մի այնպիսի տեղ, ուր կածանը խառնուել էր: Վերադարձի ճանապարհ չկար: Քամին ազմկում էր անտառում ու ծառերը խուլ հտառչում էին: Քիչ յետո թափուել սկսեց յորդառատ անձրևը, մութ ամպերը որոտացին, կայծակը վիթխարի սուրի նման անտառը կիսեց եւ շողաց մինչև այդ խոր կիրճի յտակը:

ՌԱՀԻՄ — Ե՞ս...

ԷլիԱ. — Եւ ահաւոր որոտումից սարսափահար արթնցա (էլիան սկսում է հեկեկալ եւ քաշկիմակով արցունքները սրբել):

26679



ՌԱՀԻՄ — Էլիա, ինչո՞ւ էք այդքան յուզւած, ինչո՞ւ էք լաց լինում:

ԷԼԻԱ — Ո՛հ, Ռահիմ, չե՛մ ուզում, չե՛մ ուզում այդ վայրեանը մտաբերել (աչֆերը չորցնելով եւ աջ դաստակը երկարելով) իմ աջ դաստակը տակաւին ցաւում է:

ՌԱՀԻՄ — (Բռնելով Որա աջ ձեռքը ուժգին սեղմում եւ համբուրում է դաստակը):

ԷԼԻԱ — Ռահի՛մ, Ռահի՛մ Ջալատո...

ՌԱՀԻՄ — (Երկուսը միասին վեր կենալով) Միթէ չանցա՞ւ քո դաստակի ցաւը: Մոռացիր այդ երազը եւ մի քիչ ուրիշ բաների մասին զրուցենք:

ԷԼԻԱ — Լաւ, սիրեցի՞ր մեր ներկայացումը ակումբում:

ՌԱՀԻՄ — Օ՛հ... լա՛ւ... վատ... սանկ-նանկ...:

ԷԼԻԱ — Լա՞ւ... վա՞տ... սանկ-նանկ... ի՞նչ էք ուզում ասել Ռահիմ:

ՌԱՀԻՄ — Դու լաւ դերասան ես, Էլիա, բայց միւսները ո՛չ:

ԷԼԻԱ — Ջարմանալի... Միթէ՞ Պղնձունին դէշ դերասան է եւ դէշ գրո՞ղ...:

ՌԱՀԻՄ — Պղնձունին երբեք գրել չի գիտեր: Նա կարծես այդ պիէսը գրել է լոկ իրեն համար:

ԷԼԻԱ — Ի՞նչպէս թէ, չտեսար ի՞նչպէս հանդիսականները ծափահարում էին երբ ես բեմի վրա իմ կուլակ հայրս սպանում էի եւ Պղնձունին դալիս ինձ հետ ողջագրում էր որպէս մի հերոսուհու:

ՌԱՀԻՄ — Հենց այնտեղ է, որ Պղնձունին հիմնովին սխալում է: Երբ դու քո հայրը սպաննում ես, վարագոյրը անմիջապէս պէտք է վար իջնէր, որպէսզի աւելի տպաւորիչ լինէր: Իսկ նա այնպէս է կարգադրել, որ պատեհութիւն ըստեղծի քեզ համբուրելու:

ԷԼԻԱ — Ե՞՛ւ...

ՌԱՀԻՄ — Այդ վերջաւորութիւնը իմ վրա խիստ վատ տպաւորութիւն է թողել:

ԷԼԻԱ — Նախա՞նձ... թէ....



ՌԱՀԻՄ — Ո՛չ, ո՛չ, ես չեմ նախանձում, բայց ի՞նչ  
են քեզ շատ համբուրում:

ԷԼԻԱ — Եթէ գեղարեւտը այդ է պահանջում . . . :

ՌԱՀԻՄ — Էլիտ՛, ես քեզ չեմ մեղադրում: Ես մեղա-  
դրում եմ Պղնձունուն, որ մի այդպիսի աննաշակ պիէս է  
գրել, որ գեղարեւտի մօտից իսկ չէ անցել:

ԷԼԻԱ — Էլ ուրիշ քննադատութի՛ւն:

ՌԱՀԻՄ — Ես այնպէս էի համոզւել, որ որեւէ մէկը քեզ  
չի կարող համբուրել, բայց բանից դուրս է գալիս, որ բոլոր  
գերասանները համբուրում են, իսկ դու ինձանից դիտում ես  
մի համբուր:

ԷԼԻԱ — Ռահիմ Չալատո, դու պէտք է քաջ գիտնաս  
որ բեմի վրա եղած համբուրները ոչ մի նշանակութիւն չու-  
նեն. դու էլ կարող ես այդ համբուրներից ստանալ, եթէ դե-  
բասան լինես:

ՌԱՀԻՄ — (Մի վայրկեան աչքերը աստ անդ պտտցնե-  
լով) Էլիտ՛, Էլիտ՛, ի՞նչ սքանչելի տեսարան (դերասանական  
ձեւեր առնելով) երկինքը ջինջ է, արեւը ժպտում է անտա-  
սին վրա, թռչունները երգում են, իսկ գեփիւրը ծառերի  
տերեւներն է համբուրում, իսկ երկու սիրահարներ իրար են  
ողջադրում (Էլիան իր քիւերիմ մէջ առնելով համբուրում է):

ԷԼԻԱ — (Ամչկոտ ժպիտով) Ռահիմ, այս համբուրը  
լրական է, իմ շրթները այրում են:

ՌԱՀԻՄ — Առաջին համբուրը ամենաանուշն է, ես եր-  
բեք չպիտի կրնամ մոռնալ այս համբուրը:

ԷԼԻԱ — Եւ ո՛չ էլ ես:

ՌԱՀԻՄ — Էլիտ, այսօրւա իմ երջանկութիւնը կատար-  
եալ պիտի լինի, եթէ թոթուն ձայնովդ ինձ համար, միայն  
ինձ համար, երգես (երկուսը ժայռի վրա նստում են),

ԷԼԻԱ — (Սկսում է երգել) ՔՆԼԵՐ, ՑՈՒԵՐ . . .

Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Արեւի տակին  
Քեւլեր, ցեւեր՝ իմ հարը,  
Սարի սովոր,  
Մեն մենաւոր,  
Շե՛կ տըղա,  
Շո՛ղ արեղակ,  
Թո՛ղ արեղակ,  
Ե՛կ, տըղա:

Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Գերանդին ուսին  
Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Հով ծառի տակ,  
Ջով ծառի տակ,  
Ե՛կ, տըղա,  
Հունձ հս արեւ,  
Քրտինք դառեւ,  
Շե՛կ տըղա:

Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Աղբիւրի տակին  
Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Կանաչ առւով,  
Ճանաչ առւով,  
Ե՛կ, տըղա,  
Բաղովն արի,  
Շաղովն արի,  
Շե՛կ տըղա:

Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Ջա՛ն աչքի լուսին,  
Քեւլեր, ցոլեր՝ իմ հարը,  
Հով է, քնի՛ր,  
Ջով է, քնի՛ր,  
Շե՛կ տըղա,  
Հունձ հս արեւ,  
Շատ բեղարեւ,  
Շե՛կ տղա:

Խօսք ժողովրդական  
Երաժշտ. մշ. կոմիտասի եւ Սպ. Մելիքեանի

ՎԱՐԱԳՈՅՐ

## ԱՐԱՐԻԱԾ Բ.

Բեմը ներկայացնում է կոմբինատի գրասենեակը, որ երկու մասի բաժնուած է: Աջ կողմը դիրեկտորի գրասենեակն է, դրւած են մի սեղան եւ աքռոներ: Գրասեղանի վրա դրւած են քերթեր, քուղքեր, քելեֆոն, զանգանկ եւ ուրիշ պիտոյքներ: Նախասենեակը կահաւորւած է երկու սեղաններով, միում վրա կա գրամեքենա եւ միմիակրաֆի մեքենա, իսկ միւսին վրա գտնոււմ են քելեֆոն եւ այլ գրասենեակի վերաբերեալ առարկաներ եւ քուղքեր:

### ՏԵՍՒՎ Ա.

#### ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, ՀԱՍՄԻԿ ԵՒ ԷԼԻԱ

(Վարագոյրը բացելիս, Բարխուդարեանը արդէն նստել է իր գրասենեակին մէջ անգլիական ծխամորճ է փտտացնում եւ սեղանի վրա գտնուած քերթերը եւ քղքակցութիւնները պրպտում: Հասմիկը իր սեղանին վրա հաշիւներով է գրադոււմ, իսկ Էլիան գրադոււմ է միմիակրաֆով):

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.** — (Առանց իր աչքերը լրագրից վերցնելու զանգահարում է):

**ՀԱՍՄԻԿ.** — (Ներս մտնելով եւ ժպտում) *Բարեկոյս, Յակոբ Մխայեղիչ, կանչեցիք կարծեմ:*

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.** — (Կարճ եւ կտրուկ) *Օրւա թւերը:*

**ՀԱՍՄԻԿ.** — *Հտում եմ* (մանկական ուտումով գնում է դէպի դուռը եւ դուրս գնալու պարագային դէպի հտ ակնարկ նետում: Իսկ դիրեկտորը սառը դէմքով՝ լրագրերի վրա հակած է: Մի քանի վայրկեան վերջ Հասմիկը կրկին ներս մտնելով քւեր պարունակող մի քուղք սեղանին վրա դնելով) *Յակոբ Մխայեղիչ, Հոկտեմբերեան հանքերը տեղեկութիւն չեն ուղարկել:*

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.** — *Շտապ պահանջել հեռախօսով:*

**ՀԱՍՄԻԿ.** — *Հտում եմ:*

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.** — *Չուչացնել:*

**ՀԱՍՄԻԿ.**— *Լսում եմ* (գիրեկտորը ազահ նայածով գննում է քւերը, իսկ Հասմիկը սպասողական դրուքեամբ կանգնած է նրա դէմ) : *Կարծեմ ազատ եմ :*

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— *Այո՛, ազատ էք :*

**ՀԱՍՄԻԿ.**— (Դուրս ելլում արագ ֆայլերով եւ սկսում է հեռաձայնել) :

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— (Գլուխը օրօրելով եւ ծխամարնը անընդհատ վատացնելով կարդում է, մտախուսում եւ վերլուծում քւերը եւ յանկարծ բացագանչում) *Դ՛... (նորից զանգահարում եւ Հասմիկը ներս է գալիս) Հոկտեմբերեան հանգերից ի՞նչ տեղեկութիւն :*

**ՀԱՍՄԻԿ.**— *Տեղեկութիւնները դեռ պատրաստ չեն :*

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— *Ո՛ւՖ... ամեն օր այսպէս, սա խայտառակութիւն է...*

**ՀԱՍՄԻԿ.**— *Այո՛, Յակոբ Մխայելիչ, խայտա...*

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— *Տարելչիկին նկատողութիւն անել իմ անունից՝ հեռախօսով :*

**ՀԱՍՄԻԿ.**— *Իսկոյն :*

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— *Շտապ ինձ մօտ կանչել Մատուրովին եւ Ալեքսէեւին :*

**ՀԱՍՄԻԿ.**— *Լսում եմ :*

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— *Այդպէս (Հասմիկը դուրս գնլլէ, իսկ նա վերցնելով «Գրոհ» քերթը մի վայրկեան ինքնիրեն կարդալէ վերջ) է՛... դուռիս են տանում, հասկացանք, էլի... (հեռախօսը գնգում եւ նա պատասխանում է) Լսում եմ... Ես եմ : Նայել եմ, նայել... ճիշտ է... ճիշտ է... այո՛, խայտառակութիւն... այո, ... մօտս եմ կանչել Մատուրովին եւ Ալեքսէեւին, տեսնենք ի՞նչ են ասում... այո՛, այո՛... պէտք է... պէտք է... պէտք է սեղճել... Մի վտխի... այո, լու... լու... անսպասան կը դանդահարեմ... ցը (լսափողը տեղադրում է եւ նորից զանգահարում) :*

**ՀԱՍՄԻԿ.**— (Փուտկոտ ներս մտնելով) *Լսում եմ :*

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ.**— *Յայտնեցի՞ք էնժիններներին :*

**ՀԱՍՄԻԿ.**— *Այո՛, շուտով կգան :*

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Հեռագրեր չկան:

ՀԱՄՄԻԿ — Ո՛չ:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — (Մի քուղք երկարելով) Լա՛ւ, աւէք այս գրութիւնը տպելու: Շրջկոմին, պատճեն կենդկոմին, պատճեն ժողկոմխորհին:

ՀԱՄՄԻԿ (Հեզմակամ տոնով) Ներեցէք, Յակոբ Մխայիւիշ, էլիան մի քիչ դրաղւած է, տպել չի կարող:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Ընդհատել...:

ՀԱՄՄԻԿ — Կարեւոր է:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Ի՞նչու է դրաղւած, ի՞նչն է աւելի կարեւոր, չեմ հասկանում:

ՀԱՄՄԻԿ — Ձգիտեմ... ասում է շատ կարեւոր է... Կոմսոմոլի բջիջի արձանագրութիւն է, ինչ է...:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Նրա ժամանակը չէ, ընդհատել:

ՀԱՄՄԻԿ — Լսում եմ... Կոմսոմոլի բջիջի տեխնիկական քարտուղարն է, ամբողջ ժամանակ արձանագրութիւն եւ բաղւածք է տպում:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Աշխատանքի ժամանակ չթոյլատրել

ՀԱՄՄԻԿ — Եթէ միայն լսի: Եթէ միայն հաշի սունի իմ կարգադրութիւնները: Կոմերիտուհի է, ի՞նչպէս կարող է լսել անկուսակցական Համիկի կարգադրութիւնը:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — (Բարկուքեամբ) Արդիւեւ, կարգադրել իմ անունից:

ՀԱՄՄԻԿ — Լսում եմ:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Ուրեմն Շրջկոմին, պատճեն կենդկոմին, պատճեն ժողկոմխորհին: Ձմոռնալ մի օրինակ էլ ուղարկել «Գրոհ»ի խմբագրութեան ի տեղեկութիւն:

ՀԱՄՄԻԿ — Լսում եմ:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ — Ուրեմն ազատ էք:

ՀԱՄՄԻԿ — Մերօր: (Նախասեմետակը մտնելով) էլիա, եթէ կարելի է մի քանի բողբոջ ընդհատիր արձանագրութիւնդ եւ տպիր այս թուղթը, դիրեկտորը կարգադրեց... խիտ շտապ է: Շրջկոմին, պատճեն կենդկոմին, պատճեն ժողկոմխորհին:

էլիւս. — Այսինքն ի՞նչ ես ուզում ասել, Հասմիկ, ես կարծեմ քեզ յայտնեցի, որ պարսպ նստելու փոխարէն մեր արձանագրութիւնը պէտք է տպեմ, իսկ երբ դորձ կա, էլ ի՞նչ խօսք ընդհատելու մասին. իսկոյն: Բայց քո այդ տոնը ես չհասկացա...:

ՀԱՍՄԻԿ. — (Ծիծաղելով) Ո՛ր իմանա, կարող եմ յանկարծ խանդարել ձեր բջիջի աշխատանքները, թեքման մէջ կը գցեք եւ կորա...:

էլիւս. — Ի՞նչեք ես ասում Հասմիկ, ի՞նչ չարն ես (սկըսում է արագօրէն մեքենագրել):

ՀԱՍՄԻԿ. — Ձէ, ես հենց էնպէս, կատակի համար. (նրստելով գրասեղանի առաջ, պայուսակը բաց անելով սկսում է շրթները կարմրցնել եւ հրեսիմ փուտրա գցել):

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԱԼԵՔՍԷՆԻ

(Նիկոլա Ալեքսէի մայրսանձակը մտնելով գլխի շարժումով կը բարեւէ Հասմիկին):

ՀԱՍՄԻԿ. — Նիկոլա Ալեքսէեւ, ձեզ հրաւիրել է Յակոբ Մխայիկէնը: (Դուռը բանալով) Խնդրեմ:

ԱԼԵՔՍԷՆԻ. — Մերսի, (Ներս կը մտնէ):

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ. — Նստեցէք, Նիկոլա Ալեքսէեւ, խնդրեմ, թերթերով մի քիչ զբաղւեցէք մինչեւ Մատուրովին յամանելը:

ԱԼԵՔՍԷՆԻ. — Մերսի... մերսի... (սկսում է քերթերը պրպտել):

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԾԱՏՈՒՐՈՎ

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Նախասանձակը մտնելով գլխարկը հանում եւ բարեւում է մայր Հասմիկին եւ ապա էլիային) Պատիւ ունեմ ողջունել մեր յարգելի օրիորդներին. ինչպէս են զգում իրենց ծիսի եւ պղնձի աշխարհի ծաղիկները:

ՀԱՍՄԻԿ — Մերսի, Ալեքսեյ Մատուրով, շնորհակալ  
եմ... լաւ ենք. պլաններ՝ բ, պլաններ՝ բ, տոկոսներ: Ապրում  
ենք, էլի:

ԾԱՏՈՒՐՈՎ — Այո՛, սիրելի Հասմիկ, պլաններ՝ բ, պլան-  
ներ՝ բ: Ի՞նչ կա աւելի քաղցր, քան պլանները համար պ-  
քարիլը: Պլանը՝ մեծ դործ է, մեծ աշխատանք, մեծ ողի-  
ւորութիւն, ինչպէս սողմանակատում է լինում: Դուք ասենք  
սողմանակատ չէք տեսել եւ հաւանարար չէք էլ տեսնելու...

ՀԱՍՄԻԿ — Վո՛ւշ... Ատուած ոչ անի...

ԾԱՏՈՒՐՈՎ — Այո՛, լաւ սողմանակատ է, յեղափոխու-  
թիւն տաանց արեան: Իսկ դո՛ւ, սիրելի Հասմիկ, դուր սս  
հեղնական տոնով խօսում մեր պլանները մասին, մեր պլան-  
ները մեծ պլաններ են, յաղթանակի պլաններ: (Ելիսյիմ  
դառնալով) Ի՞նչ կասի այս մասին մեր փոքրիկ փայտփորիկը:

ԷԼԻԱ — (Առանց աշխատանքը ընդհատելու եւ ժպտելով)  
Ճիշտ էք, Ալեքսեյ Մատուրով, ես համաձայն եմ ձեզ հետ:

ՀԱՍՄԻԿ — (Հեզմակամ տոնով) Այլ կերպ չէր էլ կարող  
լինել: Ի՞նչ որ ասի Ալեքսեյ Մատուրովը, դու համաձայն ես,  
այդ ես լաւ դիտեմ:

ԷԼԻԱ — (Աշխատանքը շարունակելով արհամարհական  
հայեացքով Հասմիկին է նայում):

ԾԱՏՈՒՐՈՎ — Ահա, տեսնո՞ւմ էք, Կոմսոմոլը մեզ հետ  
է...:

ՀԱՍՄԻԿ — (Կատակով) Ես էլ անկուտակցականների  
կողմից համաձայն եմ:

ԾԱՏՈՒՐՈՎ — Այդպէ՛ս, այդպէ՛ս, Հասմիկ, առանց ո՛չ  
մի բառի դադար տանելու, պէտք է պայքարել պլանների  
համար, դրանից է կախուած մեր բախտն ու ապագան:

ՀԱՍՄԻԿ — Ո՞վ է հակառակում, ես հենց այնպէս կա-  
տակում էի, իսկ դուք քիչ է մնում քաղաքական եզրակացու-  
թիւններ հանէք... բանաձև՝ է, թեքո՞ւմ...

ԾԱՏՈՒՐՈՎ — (Միծաղելով) Հասկանալի է:

ՀԱՍՄԻԿ — Ալեքսեյ Մատուրով, դիրքկոտորը ձեզ կա՞-  
շել է, պլանների թերակատարման մասին հաշիւ է պ...

ջում, գնացէք, պատասխան տւէք: Իսկ դուք մեզ բռնել եւ պլաննի բի մասին ճառ էք ասում:

**ԾԱՏՈՒՐՈՎ** — Ես հենց դրա համար էլ եկել եմ: Է՛ր, է՛ր, լ՛նչպէս է մարդ իրեն մոռանում, երբ ղեղեցիկ աղջիկներով է շրջապատուած լինում... (գիրեկտորի գրասենեակը մտնելով) Ողջոյններս դիրեկտորին:

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ** — (Գլխով ընդունելով բարեւը) Նըստեցէք, Ալեքսեյ Ծատուրով: Տեսնում էք կարծեմ, դրուժիւնը գնալով վատթարանում է... Ոնդրեմ, երէկա թւերն են (սկսում է կարդալ քուզքի վրայից) Ստալինեան հանքերը 54 տոկոս, Եահումեանը՝ 57, Հոկտեմբերեանը դեռ տեղեկութիւն չի ուղարկել, հաղիւ թէ նա էլ բանի նման լինի, 50 կամ 60, ո՛չ աւելի: Իսկ ձուլարանը 61 տոկոս, Նիկոլա Ալեքսէեւ: Վոնց որ ժողովուրդն է ասում, դառը դատում՝ դատարկ նստում ենք:

**ԱԼԵՔՍԷԵՒ** — Գիտեմ:

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ** — Միթէ՞ այսպէս կարելի է շարունակել, խօսեցէք բարեկամներ:

**ԱԼԵՔՍԷԵՒ** — (Արծաթէ ծխատուփը երկարելով) Ոնդրեմ պապիրոս...:

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ** — Մերսի... Հուպ կտան... Խիստ հուպ կտան: Նոր Երջկոմից Սեդրակն էր զանգահարում: Կենդկոմից հեռագիր կա...

**ԱԼԵՔՍԷԵՒ** — Ձուլարանի թերակատարման գլխաւոր պատճառը հանքերի պակասն է: Հողից, փայտից, կամ թէ բանւորների ոտներիցը հո՛ պղինձ՝ չենք ձուլելու: Այդ տեխնիկային դեռ չենք հասել, հնարաւոր չի: Բացի այդ, ես նորից սուր կերպով գնում եմ Փլոտացիոն գործարանի եւ արտացոլիչ վառարանների կառուցման հարցը:

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ** — Արտացոլիչ վառարանների եւ Փլոտացիոն գործարանի հարցը շուտով կը քննենք եւ. ♣

**ԱԼԵՔՍԷԵՒ** — Այդ շուտովը շատ երկարեց... շատ...:

**ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ** — Ի՛նչ արած, բիւաւ հո՛ չենք եփում, նոր օճարան ենք կառուցում, վոնց որ ժողովուրդն է աս-



ում, պէտք է երեք շափել, նոր մէկ կարել... պէտք է լաւ  
մտածել, լաւ ստուգել, հիմնաւորել... :

ԱԼԵՔՍԷԵՒ — Համաձայն եմ, սակայն շուտ մտածել,  
շուտ ստուգել: Գործը չի սպասում:

ԲԱՐՆՈՒԴԱՐԵԱՆ — Կը շտապեցնենք, կը շտապեցնենք:

ԱԼԵՔՍԷԵՒ — Տեսնե՞ք... :

ԲԱՐՆՈՒԴԱՐԵԱՆ — Իսկ դուք ի՞նչ կասէիք, Ալեքսեյ  
Ծատուրով:

ԾԱՏՈՒՐՈՎ — Ես ի՞նչ կասեմ... (մտածելով) Ահա իմ  
սեղիքը: Ֆրանսահան առածն ասում է, որ ամենազեղեցիկ  
կի՞նն անգամ կարող է տալ այնքան, որքան կի՞նը կարող է.  
Այժմ մեր այս լեռը մի պառու կի՞ն է դարձել, նրա հետ շատ  
յոյսեր չպիտի կապել: Պէտք է հանգամանօրէն եւ փաստաբ-  
կրած զեկուցում ներկայացնել կուսակցութեանն եւ կառա-  
վարութիւնը, խնդրել պլաններ իջեցում՝ առնւազն երե-  
սուներ, քառասուն տոկոսով... Ես կարող եմ գիտական կեր-  
պով ապացուցանել, այդ այդպէս է...

ԲԱՐՆՈՒԴԱՐԵԱՆ — (Զանգահարում է եւ Հասիկը ներս  
է գալիս) Ընդհատել իմ աւած գրութեան տպագրութիւնը:

ՀԱՍՄԻԿ — Լսում եմ (մեկնում է):

ԲԱՐՆՈՒԴԱՐԵԱՆ — (Ծատուրովին) Շարունակեցէ՛ք:

ԾԱՏՈՒՐՈՎ — Իջեցնելով արտադրութեան պլանը, մենք  
հնարաւորութիւն կունենանք, մի կողմից եղած ոչալ պլան-  
ները կատարել, միւս կողմից վերջնականապէս շօշափել այս  
պառուի կողերը եւ պարզել նրա վերջին ունակութիւնները:

ԱԼԵՔՍԷԵՒ — Ես հակառակ եմ այդ կարծիքին: Իմ ա-  
ռաջարկութիւնն այս է, պլաններ կրճատման մասին ոչ մի  
խօսք, ամենաշտապ կերպով ձեռնարկել Փլոտացիոնի եւ ար-  
տացուիչի կառուցման աշխատանքներին: Ահա...

ԾԱՏՈՒՐՈՎ — Իսկ եթէ հանքերի պաշարները առհասա-  
րակ սպառած են, այն ժամանակ անհրաժեշտ հումքը որտե-  
ղի՞ց ճարենք քս Փլոտացիոնի համար:

ԱԼԵՔՍԷԵՒ — Ծիծաղելի է այդպիսի հարց տալը: Քո  
տերմինով ասած, այս ռազմաւանճ որքան էլ ուժասպառ լինի,

Քլոտայցիոն գործարանն աշխատցնելու համար էլի բաւական  
հիւթեր ունէ իր ընդերքում :

ԾԱՏՈՒՐՈՎ — Տեսնենք, ապազան ցոյց կտա :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — Ինձ թւում է, որ արտադրութեան  
խորհրդակցական ժողով դումարենք եւ այս հարցը քննենք :  
Ալեքսեյ Մատուրով, դուցէ ինքներդ կը ղեկուցէի՞ք :

ԾԱՏՈՒՐՈՎ — Խնդրե՛մ :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — Իսկ ե՞րբ յարմար կը դռնէք :

ԾԱՏՈՒՐՈՎ — Երբ կամենաք :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — Կարելի՞ է հենց այս երկու օրերս :

ԾԱՏՈՒՐՈՎ — Ինձ համար մէկ է :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — (Զամգահարում եւ Հասմիկը մերս  
է գալիս) Երկու օրից յետո, այնպէս չէ՞, Ալեքսեյ Մատուրով :

ԾԱՏՈՒՐՈՎ — Այո՞ :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — (Հասմիկը արագ արագ գրում է) :  
Հրաւիրել հանքերի եւ ձուլարանի արտադրական միացեալ  
լայն խորհրդակցութիւն, Հանքիոմի եւ Գործկոմի մասնակ-  
ցութեամբ... Ներկայացուցիչներ հրաւիրել Կոմբլիշներից,  
Պրոֆբիւրոյից, Կոմսոմոլից, «Գրոհ» թերթից : Օրակարգում  
դնել Ալեքսեյ Մատուրովի ղեկուցումը... հանքերի հետազո-  
տական աշխատանքի մասին, այդպէ՞ս է, Ալեքսեյ Մատու-  
րով :

ԾԱՏՈՒՐՈՎ — Ճիշտ է :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — (Հասմիկին) Երջարե՞րականը տպել  
եւ ուղարկել, շտապ :

ՀԱՄՄԻԿ — Լսում եմ (մեկմերու ատեն ժպիտ կը փոխա-  
նակէ Մատուրովի հետ) :

ԾԱՏՈՒՐՈՎ — (Մխատուիք երկնցմելով) Դիրեկտոր,  
խնդրեմ, պապիրոս :

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — Մերսի՛, ես թամբաքու եմ ծխում :

ԾԱՏՈՒՐՈՎ — Անգլիական ծխամորճո՞վ... ☹

ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ — Վա՞տ է...

ԾԱՏՈՒՐՈՎ — Ոչ, ընդհակառակը... Ստալինեա՞ն է :  
Ցտեսութիւն... (Ֆարտարապետները մեկնում են) :

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ** — Յախուժի՛ւն... (ոսփի է ելլ. եւ սկսում է սեճեակում ման գալ եւ ինքնիքն գրուցել) *Հիմա Շրջկամի քարտուղարին մօտ դնամ, թէ չէ. արդեօք Սեդրակն ի՞նչ կասի: Լաւ կը լինի որ դնամ* (սեղանի վրայի բուրբերը դասաւորելով, գլխարկը գլուխը դնելու պարագային ներս է մտնում Սեդրակը):

ՏԵՍԻԼ Գ.

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ, ՀԱՍՄԻԿ, ԷԼԻԱ ԵՒ ՍԵԴՐԱԿ**

**ՍԵԴՐԱԿ** — Բարեւ, ընկեր. դիրեկտոր, արդեօք տե՞ղ դնալու պատրաստու՞մ էք:

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ** — (Այլալլած) Ես էլ չենց հիմա պատրաստու՞մ էի ձեզ մօտ դալու, ընկեր Սեդրակ:

**ՍԵԴՐԱԿ** — Ի՞նչ է, պատմի՛ր տեսնենք:

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ** — Երկար դրոյց ունեցա Ալեքսէեւի եւ Ծատուրովի հետ: Ալեքսէեւն իրենն է քշում—Փլտտացիոն, արտացոլիչ: Բայց հետաքրքրական են Ծատուրովի մտքերը: Նա ապացուցում է, որ հանքերի պաշարներն սպառել են (Սեդրակը սկսում է դեմքը խոժոռոցնել եւ քեֆ նայել ու ժրպտալ), որ պլանները պէտք է իջեցնել եւ այն էլ՝ երեսուներկու քառասուն տոկոսով... Վոնց որ ժողովուրդն է ասում...

**ՍԵԴՐԱԿ** — (Միջամտելով) Ստոյ, ստո՛ւյ, կեցցե՛ս, քաջ դիրեկտոր ես եղել, էս իմ ասուած, ի՞նչպէս սիրող չի ճարել... Հա՛, Հա՛, Հա՛:

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ** — (Խայրւած) Ինչո՞ւ ես ծիծաղում, Սեդրակ:

**ՍԵԴՐԱԿ** — (Լուրջ ու կտրուկ տոնով) Քեզ վրա, որ ոչ միայն նստել լսել ես այդ օպորտունիստական, ես կասէի միասարարական մնդստոցները, այլ եւ, լեղաճաք ես եղել: Քեզ կնտեղ նստեցրել են ոչ թէ ամեն բան լսելու եւ հաստատուու, այլ դեկավարելու համար, բուլշեփիկօրէն դեկավարելու համար: Միթէ՞ պարզ չի:

**ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ** — Պարզ է (խիստ շարած):

Փլու՛ ՍԵՂՐԱԿ — (Ուտի ելլելով) Ուրեմն էլ ի՞նչ հարա-հրոց,  
հէլ ի՞նչ աղմուկ պլանների կրճատման... Գուցէ հանքե՞րն էլ  
կը փակէինք: (Գլխարկը վերցնելով երբ գնալու պատրաստ-  
ոււմ է, վարագոյրը կամաց կամաց իջնում է):

ՎԱՐԱԳՈՅՐ

## ԱՐԱՐԻԱԾ Գ.

Բեմը ներկայացնում է անտառուտ մի վայր: Հե-  
րետում են բլուրների բարձր գագաթներ: Անտառի մէջից  
նում է մի գետակ, որի երկու եզրերը մացառուտ են: Տ-  
մամակը երեկո է. արեւը արդէն մայրն է մտել եւ աստղերը  
սկսել են փայլել:

ՏԵՍԻՎ Ա.

ԷԼԻԱ

ԷԼԻԱ. — (Մացառների մէջից կամաց քայլերով բեմ կու-  
գա. ձեռքը ունի ծաղկեփունջ, որի վրա հիանալով) Ա՛խ,  
ինչ գիւղիչ է նրանց բոլոր: (Երեսը մէկ վայրկեւսն ծաղկե-  
փունջին մէջ քաղելով) Այնի՛ւ ծերուկ է Անդրեյն, ամեն հան-  
դիպելիս նա ինձ ծաղիկ է նւիրում: (Կրկին ծաղիկների մէջ  
երեսը քաղելով) Օօ՛հ... Ի՛նչ զմայլելի տեսարան: (Մարգա-  
յիտնի վրա նստելով եւ մէկ ձեռքը երեսին դրած, նա սկսում  
է մեղմ ձայնով երգել եւ աստիճանաբար բարձրացնել ձայր:  
Երգը վերջանալուց յետո նա կրկին սկսում է ծաղիկների հետ  
համբուրել):

### ԳԻՇԵՐՆ ԵԿԱԻ

Գիշերն եկաւ, աստղերն ելան,

Լուսնակն անուշ ցոլցրլաց,

Ծաղկունքն ամեն նոր քուն մտան՝

Ամպի ցողով, լուսնի շողով

Հարհանդ—մարմանդ քուն մտան:

Դուք էլ քնէք, ոսկի աստղեր,

Վարդ ու բլրրո՛ւլ, քուն ելէք,

Օրօր—ծովե՛ր, շորօր—հովե՛ր,

Անուշ—անուշ քուն ելէք:

Իմ սար դարդե՛ր, իմ ծով ցաւե՛ր,

Դուք էլ մո՛ւլ—մո՛ւլ քուն ելէք:

Խօսք Աւետիք Իսահակեանի

Երածշտ. Դանիէլ Ղազարեանի

Քլմ. (Ապա ելլելով տեղիցը եւ դիտելով լայնարձակ հեռուն-  
քէն, վերսկսում է երգել եւ երգի ընթացքին ծաղիկները մե-  
կիկ մեկիկ կը քափին գետին) :

## ՀՈՎ ԱՐԷՔ

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,  
իմ դարդին դարման արէք:—  
Սարերը հով չե՛ն անում,  
իմ դարդին դարման անում:  
Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ գով արէք,  
վարար անձրեւ քափէք, ծով արէք,  
Գէշ մարդու օր-արեւը  
Սեւ հողի տակով արէք:

Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,  
իմ դարդին դարման արէք:—  
Ամպերը հով չե՛ն անում,  
իմ դարդին դարման անում:  
Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր, ջրերե՛ր,  
Մարմանդ-մարմանդ վագող աղբիւրներ,  
Մի վեր կացէք, իմացէ՛ք,  
Տեսէք իմ սրտի ցաւեր:

*Պօսք ժողովրդական*

*Երաժշտ. մշ. Կոմիտասի*

ՏԵՍԻԼ Բ:

*ԷԼԻԱ ԵՒ ԾԱՏՈՒՐՈՎ*

*ԾԱՏՈՒՐՈՎ* — (Կամաց կամաց մօտենալով եւ զլսարկը  
հանելով) *Մեր հիմնարկութեան ամենափայլուն զարդին խո-  
րին յարգանքներս:*

*ԷԼԻԱ* — (Վեր բարձրանալով) *Ես զարդ չեմ, Ալեքսեյ,  
Ծառուբով, այլ մեքենազրուհի, մի ամենասովորական մեքե-  
նազրուհի: Բարե՛ւ ձեզ:*

ԾԱՏՈՒՐՈՎ. — Մեքենադրուհի՞, այո՛, ճիշտ է, սակօ  
շիմնարկութեան համար, ունեկացուցակում, անկետաներում,  
խոկ կուլտուրական մարդու համար դուք զարդ կարող էք հա-  
մարել, ամենաթանկազին զարդ:

ԷԼԻԱ. — Ի՞նչ կուլտուրականութեան մասին է խօսքը,  
Ալեքսեյ Մատուրով... անծանօթ է...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Այն կուլտուրականութեան մասին, որը  
դիտէ զնահատել այն ամենը, ինչ սովորականից, առօրեայից  
բարձր է, ինչ արեւստ է, խոկ կինը, էլիա, կինն ամենաբարձր  
արեւստն է, բոլոր արեւստները ծնող բիրիխական Յւան է նա:  
Վերցրէք նկարչութիւնը, վերցրէք քանդակադործութիւնը,  
վերցրէք պոէզիան:

ԷԼԻԱ. — Ուրեմն ըստ ձեզ՝ կինը, դա...

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Միջամտելով) Սրբութի՛ւն է, այո՛...

ԷԼԻԱ. — Սրբութի՛ւն...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Աւելին, հաւատացնում եմ ձեզ:

ԷԼԻԱ. — Ինչե՛ր էք ասում, Ալեքսեյ Մատուրով, ծիծա-  
ղելի է... ձեզ ի՞նչ է պատահել այսօր, չեմ հասկանում:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Այո՛, տարօրինակ է դուցէ, այն մտրդը,  
որն ամբողջ օրը մոտացած իր անձնաւորութիւնը, քրտինք  
մտած աշխատում է, որը կանանց խիստ ու կողիտ հրաման-  
ներ է արձակում, որը կնոջն իջեցրեց մինչև մութ հանքի՛ր  
աշխատանքը, ուր պիտի խամբի նրա երեսի զոյնը, այդ  
մտրդն ահա, տեսէք ինչե՛ր է խօսում կանանց սրբութեան  
մասին, ծիծաղելի է, չէ՞...

ԷԼԻԱ. — Այո՛, շատ տարօրինակ է, Ալեքսեյ Մատուրով.  
այսօր, ի՞նչ ասեմ, դուք բոլորովին ձեզ նման չէք:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ընդունում եմ, ճիշտ է, բայց այդ ճիշ-  
մարտութեան մէջ ուրիշ ճշմարտութիւն կա: Այո՛, ես ձեզ  
հետ համաձայն եմ, երբ դուք, կոմունիստներդ կնոջն իջեց-  
նում էք հանքահորը, կամ ուղարկում ձուլարան, սակայն...

ԷԼԻԱ. — (Ընդամիջելով) Ես դեռ կոմունիստ չեմ...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Միեւնոյն է, կոմերիտական էք, մաղա  
կոմունիստը, տարբերութիւնը մեծ չի: Թողնենք սակայն:

անձամբ կենսագործում եմ կանանց արդիւնաբերութեան  
ՓԼՆՅՔ ներգրաւելու բոլոր որոշումները, հրամայում, կարգադրում,  
աշխատեցնում եմ նրանց, սակայն ներքին մի կռիւ  
դարձեալ ալեկոծում է...

ԷԼԻԱ.— (Ընդմիջելով) Հասկնալի է, իսկ դաւով ձեր  
ներքին երկուութեանը, Ալեքսեյ Մատուրով, ես պիտի ասեմ,  
այդ նրանիցն է... ներեցէք համարձակութեանս...

ԾԱՏՈՒՐՈՎ.— Խնդրե՛մ, խնդրե՛մ:

ԷԼԻԱ.— Որ շնայած ձեր նւիրած աշխատանքներին, դուք  
դեռ եւս ամբողջովին, այսպէս ասած՝ գլխովին... չէք ձուլ-  
ւել բանւորական այն մասսաներին, որոնց ղեկավարում էք  
սոցիալիստական շինարարութեան ճակատում:

ԾԱՏՈՒՐՈՎ.— Ես այդ հասկանում եմ, բայց միաժամա-  
նակ սիրում եմ անկեղծ լինել եւ ասել այն ամենը, ինչ որ  
ղղում եմ:

ԷԼԻԱ.— (Ժպտելով) Խրախուսելի է:

ԾԱՏՈՒՐՈՎ.— (Նիւթը փոխելով) Է՛հ, է՛հ, ի՛նչ ժամա-  
նակներ ենք ապրում, էլիս:

ԷԼԻԱ.— Այո՛, խիստ հետաքրքրական ժամանակներ են,  
ճիշտ է:

ԾԱՏՈՒՐՈՎ.— Բայց շատ աւելի հետաքրքրական է այս  
օրւա երեկոն, օդը որքա՛ն մաքուր է, երկինքը՝ որքա՛ն պայ-  
ածու, դեռը՝ հանդարտ:

ԷԼԻԱ.— Այո, ես էլ հենց դրա համար եմ զրոսանքի  
դուրս եկել:

ԾԱՏՈՒՐՈՎ.— (Խորամանկ ժպիտով) Եւ ես երեւի  
խանդարեցի:

ԷԼԻԱ.— Ընդհակառակը, պիտի խոստովանեմ, որ աւելի  
հետաքրքրական դարձրիք, չէ՞ որ մարդիկ մենակ տխրում  
են, մանաւանդ զրոսանելիս:

ԾԱՏՈՒՐՈՎ.— Եթէ միայն քաղաքավարութեան համար  
չեն ասւած այդ նուրբ խօսքերը:

ԷԼԻԱ.— Ամենեւին...



ՄԱՏՈՒՐՈՎ. — Հաւատում եմ, մերսի... (Դէպի Իկ  
նայելով) Այսպիսի երեկոներին, սիրահարւած երիտասար  
ներն ասում են զբանաստեղծական երեկոս:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ, ՀԱՄՄԻԿ ԵՒ ՌԱՀԻՄ

(Այս միջոցին գետի միւս կողմից խշռտոց է լսւում: Է-  
լիան դառնալով նշմարում է մի ինչ որ մուր սոււեր, քիչ ան-  
դին մի մուր կերպարամբ եւս: Նրանք անճանաչելի են մու-  
րի պատնառով):

ԷԼԻԱ. — Այս ի՞նչ խշռտոց է:

ՄԱՏՈՒՐՈՎ. — Այսպիսի երեկոներին, խշռտացող ան-  
տաններով, գետի ափերով, դաշտով եւ կածաններով, քայ-  
լում են սիրահարւած զոյգերը, իրար ներկայութեան մէջ  
աշխարհը մոտցած: Եւ նրանց համար չկա այլ աշխարհ, քան  
սիրո եւ երազանքի աշխարհը:

ԷԼԻԱ. — Օ՛ր, օ՛ր, ինչպէ՛ս էք գեղեցկացնում... Ալեքսեյ  
Մատուրով, դուք իսկական բանաստեղծ էք... Թագնւած տա-  
ղանդ... էլ ի՞նչ էիք մեղադրում բանաստեղծներին:

ՄԱՏՈՒՐՈՎ. — Այո՛, էլիա, սիրո մասին խօսելիս, ամե-  
նապրողայիկ մարդն անգամ, ձիարուծն անգամ, բանաստեղծ  
է դառնում, հենց այդ էր պատճառը, որ ես պնդում էի, թէ  
կինը արւեստ է, սրբութիւն, բոլոր արւեստները ծնող գեղե-  
ցիկ մայրը (կրկին խշռտոց):

ԷԼԻԱ. — (Դէպի խշռտոցը դառնալով) Ա՛յ, այս խշռտոցը.

ՄԱՏՈՒՐՈՎ. — Քայլում են այդ զոյգերը, շնչում են  
իրար հետ, մեղմ գեփիւտի նման, եւ այդ շշուէջի մէջ հնչում  
է աշխարհիս ամենանւիրական նւազը, ամենաքաղցր ձայնը,  
սիրո սրբազան ձայնը:

ԷԼԻԱ. — Օ՛ր, օ՛ր, օ՛ր... իսկապէս որ բանաստեղծ, մի  
քիչ էլ գերասան, դուք զուր է հանքահոր գնում, Ալեքսեյ  
Մատուրով, ձեր կարիէրան աւելի մեծ կը լինէր պոէզիայի  
մէջ, բեմի վրա...

Փլո՞ւ է՞ք: ԾԱՏՈՒՐՈՎ. — Եթէ մուսաւ եւ ուեթիսիյոս դուք լի-

իլիւ. — (Ձարմացմամբ) Ի՞նչպէս...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Դուք ներշնչէ՞ք:

Իլիւ. — Ձեզ հասկանում ի՞նչ էք ասում:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Այնպէս, ինչպէս այն զոյղերը, որոնք շրջում են աստղավառ այս գիշերին, որտեղ մէկը ներշնչող է, միւսը... բանաստեղծ: Պարզ է, հասարակ, ոչ պլան է հարկաւոր, ոչ նախահաշիւ, վեհ է եւ իմաստուն...:

Իլիւ. — Ի՞նչ կատակողն էք եղել, Ալեքսեյ Մատուրով:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Եթէ միայն խօսքերս կատակ համարէք:

Իլիւ. — (Լուռ է եւ չորս կողմը դիտում):

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Հետեւելով ելիայի շարժումներին) Ահա՛ եւ լուսինը, բանաստեղծներից մէկը նրան անւանել է աստղերի շողջողուն շղթայով երկնքից կախած կանթեղ, հրաշալի պատկեր է: Բայց ես աստղերի աղօտ լոյսը բաւարար եմ դանում իմ սիրո ճանապարհը լուսաւորելու համար:

Իլիւ. — Տէ՛ր իմ ասուած, այսօր ի՞նչ է պատահել ձեզ, Ալեքսեյ Մատուրով, բանաստեղծ էք դարձել, իսկական բանաստեղծ, ազնիւ խօսք... անվերջ սէ՛ր, լուսի՛ն, անտա՛ռ...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Թեքմոսն մէջ եմ ընկել, էլիս, կարծեմ սա աջ թեքում է, սակայն խնդրում եմ, ի սէր ասուածս, բանաձեւ չհանէք:

Իլիւ. — (Ծիծաղելով եւ քեւի ժամացոյցին մայելով) Բայց արդէն ժամի տասն է, Ալեքսեյ Մատուրով, իսկ ես ուշանում եմ:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Կարո՞ղ եմ ուղեկցել:

Իլիւ. — Եթէ միայն ցանկանում էք նեղութիւն կրել:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Խնդրե՛մ, այդ ո՛չ թէ նեղութիւն է, այլ հաճոյք:

Իլիւ. — Միթէ՞... (Երկուսը քեւ քեւի հեռանում են մինչ Հասմիկն ու Ռահիմը բեմ են գալիս, նրանց գացած ուղ- դուքեամբ մայելով):

ՀԱՄԱՐԻԿ — Նրանք են, նրանք, էլիան եւ Մատուրովի  
ՌԱՀԻՄ — (Գլուխը շարժելով եւ բռունցքը բարձրացնե-  
լով) Հը՛ր... այդ աւաղակը...

ՀԱՄԱՐԻԿ — Ահա քո աղանեսակը, Ռահիմ, տես, այս ա-  
տեն այս տեսակ տեղեր է պատուում եւ էնժիներներին դիտէ  
է հանում: Ա՛խ թէ նրա մաղերը ձեռքս անցնէին...

ՌԱՀԻՄ — Ձգուչացիք, որ քո մաղեր նրա ձեռքը չանց-  
նեն, նա կամերիտուհի է:

ՀԱՄԱՐԻԿ — Օհո՛, այս բոլորից վերջ տակաւին նրան  
սիրում ես, ուրեմն ինչո՞ւ թոյլ ես տալիս, որ նա ուրիշներին  
սիրահարները խլէ... Իմ պաշտելի Մատուրովը...

ՌԱՀԻՄ — (Խիստ զայրոյթով) էլիան այլեւս ինձ չի  
հետաքրքրում, բայց մի օր անպայման այդ քո պաշտելի Մա-  
տուրովին կոկորդը նանկերուս մէջ կիյնա:

ՎԱՐԱԳՈՅՐ

## ՊԱՏԿԵՐ Ա.

Բեմը ներկայացնում է Ծառուրովի ննջասենեակը: Մուտ-  
քի դուռը բեմի ձախ կողմն է, իսկ բեմի հակառակ երկու պա-  
տուհաններ կան, որ վարագոյրներով զարդարած են: Սեն-  
եակին աջ կողմը դուռն է մի անկողին եւ պատուհանին մտ  
մի գրասեղան, որի վրա կա ելեկտրական լուսամփոփ լամ-  
պար: Պատէն կախած է օրացոյց: Մէջտեղը դուռն են ուրիշ  
սեղան եւ աքոռներ: Կան նաեւ քէշ եւ կերակուր եփելիք կա-  
րասիներ: Երբ վարագոյրը բացում է, սենեակը մութ է:

### ՏԵՍՒՎ Ա.

#### ԾԱՏՈՒՐՈՎ

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Ներս մտնելով դրան քովի ելեկտրական  
կոճակը սեղմում եւ սենեակը լուսաւորում է: Գլխարկը եւ  
վերարկում հանում եւ անկողնին վրա շարտում է: Մի քանի  
րոպէ սենեակին մէջ ման գալիս, սկսում է ինքնիրեն խօսել):  
*Ա՛հ, ի՛նչ գիշեր էր, ի՛նչ աղաւնեակ, ի՛նչ սեւ աչեր, էլի  
նրա ժպիտը համբ մարդու բերանը լեզու է դնում եւ բա-  
նաստեղծ է դարձնում: (Քոնեակի շիշը վերցնում եւ մի բա-  
ժակ լեցնում) Ես մի հատ պէտք է խմեմ էլիսայի կենացը:  
(խմում է): Ա՛հ... (Մի աքոռ է վերցնում եւ գրասեղանին  
առջեւ դնելով) Ա՛խ, թէ այս անիծած ղեկոյցն էլ յաջողու-  
թեամբ վերջացնէի, ալ քէֆս կատարեալ կը լինէր: (Սեղանին  
վրայի լուսամփոփ լամպը վառում է, քաղ-ապանակէն հանում  
է հանքերի ֆիզիկական ֆարտէզը եւ պատին վրա ամրացնում  
եւ մի քանի վայրկեան ֆարտէզը զննելով) Ա՛խ, սա անիծած  
Վաթսուներորդ Հորիզոն հանքը (գլուխը շարժելով) Հը՞ր...  
ես մի էնպիսի ղեկոյց պատրաստեմ, որ սա միամիտ, ապուշ  
բանւորները հեղ մըն էլ Վաթսուներորդ Հորիզոնում Ստա-  
լինեան հանքերի անունն իսկ բերաննին չառնեն: (Սեղանի  
գծրոցը բանալիով բանալով դուրս է հանում խումացած մի  
գիրք եւ սկսում է քաղատել եւ պլակ մտտի վրա ինչ որ բաներ  
գրել: Ոտքի է ելլում եւ սենեակին մէջ մի քանի անգամ ման*

գալ էյետո, սենեակի փայլուն լամպը մարում է եւ կրկին օ  
դանին առջեւ նստելով սկսում է արագ արագ գրել): Դըդ.  
զըզ... զըզ... (գարկում են դռան եւ Ծառուրով զարմացած  
դէպի դուռը նայում է): Դըզ... զըզ... զըզ... (փութկո-  
տուքեամբ եւ շարած՝ նա քզքերը, քարտեզը եւ գիրքը  
վերցնում եւ գծրոցի մէջ դնելով բանալիով կղպում է): Այո՛,  
մտէք (սպասողական նայածով դէպի դուռն է նայում):

ՏԵՍԻԼ Բ.

ԾԱՏՈՒՐՈՎ ԵՒ ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — (Ներս մտնելով) Ողջո՛յն երիտասարդ  
էնտուդիստին (ծիծաղում է):

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ողջոյններս վլաչիսլավ Դուրրոշտանովին:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Գնահատելի՛ է... այո՛, շատ զնա-  
հատելի... Կեցցե՛ս, կեցցե՛ս... երեւում է, որ դեռ աշխա-  
տում ես... բայց ինչո՞ւ այսպիսի կիսամութումն է տքնում  
իմ երիտասարդ կոլլեգան: (Կոնակը սեղմելով սենեակը լու-  
սանքում է):

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ես սիրում եմ մութին մէջ աշխատել:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Հանքերից էի վերադառնում, օ՛ր, նրանց մայրիկը... շոյե՛մ, շատ են յողմեցնում: Իսկ դու  
ինչ գործի վրա էիր:

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Մէկ աչքը փակելով եւ գլուխը մի կողմ  
ծռելով) Աշխատում էի քեզ յայտնի գործի վրա:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Ոչինչ չե՛մ տեսնում...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ինչպէ՛ս կարող էի դուշակել, որ եկողը  
դու ես... Հաւաքեցի իրենց տեղերում:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Կեցցե՛ս...

ԾԱՏՈՒՐՈՎ. — Գաղտնապահութիւնը ժառանգական է...  
մայրս ինձ ծնել է Հօրիցս գաղտնի... Իսկ դու յողմած ես,  
դուցէ՛ մի բաժակ թէյ կը խմէի՞ր:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Ամենայն սիրով:

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Թէյի պատրաստութեան սկսելով) Իս-  
կոյն ես քեզ թէյ կտամ, հետն էլ՝ հաց ու սոսիս:

ՓԼԵ ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Օհո՛... դա իսկական ճաշկերոյթ  
լուրս եկաւ:

ԾԱՏՈՒՐՈՎ — Ի՞նչ արած, ունեցածներս այդ է...  
չնգամեակ է:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Հասկնալի՛ է...

ԾԱՏՈՒՐՈՎ — Չեկուցում էի պատրաստում, աւելի  
չուտ հիմնաւորում էի:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — (Ծիծաղելով) էլի՛, անհամբեր սպա-  
սում ենք, տեսնենք ի՞նչ Ամերիկաներ եւ բացելու: Ոսկի  
սարե՛ր...

ԾԱՏՈՒՐՈՎ — (Կատակով) Այո՛, ոսկի սարեր... հապա  
ի՞նչ էիք կարծում:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — (Սիկարէք վառելով) Նշաններիցն  
երևում է, որ սկիզբը յաջող է, տեսնենք ընթացքը եւ ընդ-  
հանուր հանրազումարը:

ԾԱՏՈՒՐՈՎ — Փայլուն է լինելու, փայլո՛ւն:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Տա ասուած:

ԾԱՏՈՒՐՈՎ — Աւելի փայլուն քան դու եւ ենթադրում:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Տա ասուած:

ԾԱՏՈՒՐՈՎ — (Թէյ լեցնելով սկսում եմ խմել եւ շա-  
րումակել խօսակցութիւնը): Եւ յաղթանակը միտսին ենք  
տօնելու, արա՛, բա՛, բա՛, բա՛, բա՛,...

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Չեմ կասկածում... հաւատում եմ:  
Կարծում եմ, որ Լէոպոլդ Արիստախովի յոյսերը դուր չեն  
անցնելու:

ԾԱՏՈՒՐՈՎ — Ես էլ եմ կարծում, այո... արա, բա՛,  
բա՛, բա՛, բա՛...

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Տեսնե՛նք...

ԾԱՏՈՒՐՈՎ — Կը տեսնե՛նք...

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ — Ա՛խ, այդ սեւ աչկերը... Ալեքսեյ  
Ծատուրով, երկու ազաւնի մի նետով եւ ուզում խփել, քաջ  
որսորդ ես, ասուած վկա:

ԾԱՏՈՒՐՈՎ — Իսկ դու մի ծիծաղիր իմ վրա, սիրա-  
հարեւի եմ:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Երծաղելու առիթ չունեմ: Սակայն  
լու աղանձինքը են, խօսք չկա:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ոչե՞նչ...

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — (Ոտքի ելլելով) դեմս, դեմս ես հան-  
դրոտանամ, իսկ իմ երիտասարդ զինակիցը թող շարունակե  
իր աշխատանքը: Ներքե՛ր, Ալեքսեյ, որ քեզ խանդարեցի:

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Ոտքի ելլելով) Ո՛չ, թարմացրե՛ր, շատ  
էի յոգնել, հիմա աւելի ետանդով կը շարունակեմ աշխա-  
տանքս:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Քեզ կոանդ ու կամք եմ մաղթում:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Իսկ քեզ քնքո՛ւչ երազներ:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — (Զեռք սեղմելով) Ցտեսութիւն, Ա-  
լեքսեյ Ծատուրով (դէպի դուռը կը քալէ):

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ցտեսութիւն (դուռը փակելից գոցելու պա-  
րագայիմ կրկին մերս է մտնում Դոբրոշտանով):

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Հա՛, քիչ մնաց որ մոտնայի մի խիստ  
կարեւոր բանի մազին ձեզ խօսել:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Կարեւո՞ր...:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Այո՛, խիստ կարեւոր, մենք չպէտք  
է մոտնանք, որ ապրում ենք մի երկրում, ուր բանւորական  
զիկտատուրա է իշխում:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Այդ հի՛չ...

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Ասել ուզում եմ, հակառակ դէպ-  
քում, եթէ մեր դաւադրութիւնը երեւան դա, թակարդի մէջ  
բոնւած մկների նման փախուստի ճանապարհ չի որոնենք:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Փախուստի ճանապարհի էնթիներութիւնը  
ձեզ եմ գտաւում:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Պարսկական սահմանազլուխը մեզինց  
բանի՞ կիլոմետր հեռու է գտնուում:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Ճիշտն ասած չեմ իմանում, բայց շատ  
մօտ է:

ԴՈՒՐՈՇՏԱՆՈՎ. — Վստահ եմ որ Ծահերի աշխարհը մեզ  
կը հիւրասիրի: Ցտեսութիւն (մեկնում է):

ՄԱՏՈՒՐՈՎ — Յտետութիւն: (Դուռը ետեւից գոցելով)  
 Քէ՛ւ՛, հա՛, հա՛, հա՛, բանւորական դիկտատուրա՛, փախուստի ճա-  
 փապա՛րհ, Եա՛հերի աշխա՛րհ, հա՛, հա՛, հա՛, կեցցե՛ս, Վլա-  
 չիւլով Դորբոշտանով, քա՛ջ զինակից: Չեմ իմանում, ինչո՞ւ  
 այս տեսակ վախկոտ մարդիկ դաւադրական մետիա են ստանձ-  
 նում: (Սեմեակի փայլում լոյսը մարելով նստում է գրասե-  
 դանի առաջ, կրկին դուրս է հանում թղթերը, փարտէզը եւ  
 գիրքը եւ սկսում է աշխատել ազօտ լոյսով: Մի փանի վայր-  
 կեան աշխատելուց յետո նրա սրտին մէջ կասկած է գարթնում  
 որ մի գուցէ սեմեակին մէջ զինքը հետապնդող աչքեր կան:  
 Նա գլուխը շրջում է եւ դիտում սեմեակի չորս բոլորը: Նա  
 երեսուհատում է, որ սեմեակի մի մուք անկիւնից դանդաղ  
 փայլերով, թեւերը ցոքտած եւ բռունցքը բարձրացուցած մի  
 բանուր դէպի իրեն է գալիս):

#### ՏԵՍԻԼ Գ.

#### ՄԱՏՈՒՐՈՎ ԵՒ ԲԱՆՆՈՐԻ ՄԸ ՈՒՐԻԱԿԱՆԸ

ՄԱՏՈՒՐՈՎ — (Սարսափահար թղթերի վրա ընկնում  
 է եւ աշխատում է ծածկել եւ դողդղալով ասում է) Եէ...  
 Եէ... ես չէ ... չէ... բան չեմ ա...նում:

ՈՒՐԻԱԿԱՆԸ — (Անհետանում է):

ՄԱՏՈՒՐՈՎ — (կրկին անգամ գլուխը վերցնում եւ չորս  
 բոլորը դիտում է, ուրակամը կրկին երեւան է գալիս) Եէ...  
 Եէ... ես չէ... չէ... բան չեմ ա...նում (կրկին ընկնում  
 թղթերի վրա եւ աշխատում է ծածկել):

ՈՒՐԻԱԿԱՆԸ — (կամաց կամաց անհետանում է, եւ վա-  
 րագոյրը դանդաղօրէն վար է իջնում):

ՎԱՐԱԳՈՅՐ



## ԱՐԱՐԻԱԾ Դ.

Բեմը ներկայացնում է բանուորական ակումբի դահլիճը Դահլիճի մուտքը բեմի ձախ կողմից է: Դիմացի պատի վրա կախած է նկարիչ Սոսեանի գծած՝ պղինձ արդիւնաբերութեան վերաբերեալ մի պատկեր, որի ներքեւ գրած է՝ «դէպի վերջնական յաղթանակ»: Պատի վրա կան նաեւ ուրիշ մի շարք լուսանկարներ: Սեւ տախտակի վրա գրած է— «Դրոհ»ը պահանջում է՝

ա) ուժեղացնել հանքերի եւ ձուլարանի տեխնիկակաջ հսկողութիւնը:

բ) Ստուգել սոցմրցման եւ հարածայնութեան դրութիւնը:

գ) Բարձրացնել հանքերի որակը:

դ) Ուշադրութիւն դարձնել բնակարանային շինարարութեանը:

ե) Հաշի առնել բանուորական առաջարկները եւ ընթացք տալ նրանց:

Դահլիճն ունի ՚բեմ, ուր դրած են մի սեղան եւ երկու աթոռներ, իսկ բեմին երկու կողմը շարած են աթոռներ: Վարագոյրը բացելիս, արդէն բեմի վրա են բաւական թույլ երկսեռ բանուորներ: Ումանք արդէն աթոռներ են գրաւած, ումանք էլ պատերի վրայի լուսանկարէն կարդում եւ նայում պատկերներին:

### ՏԵՍԻՍ Ա.

#### ԲԱՆԻՈՐՆԵՐ

Ա. ԲԱՆԻՈՐ.— (Նկարին նայելով) Լաւ նկար ա:

Բ. ԲԱՆԻՈՐ.— Էն եկուր նկարիչն ա քաշել:

Գ. ԲԱՆԻՈՐ.— Լա՛ւ նկարիչ ա,

Ա. ԲԱՆԻՈՐ.— Նկարը լաւ է, նկարիչն էլ լաւ է, դու առա, որ մեր դործն էլ էսպէս լաւ լինի, դու առա՛, որ մենք մահնքս էլ էսպէս սամթին կաշենք մեր պլանների վաղոնեակային ու քշենք տանենք մինչեւ հնդամեակի վերջը:

ՓԼՈՂ

Բ. — Էն էլ՝ շորս տարում:

Գ. ԲԱՆԻՈՐ. — Այո՛, էն էլ շորս տարում:

Ա. ԲԱՆԻՈՐ. — Է՛դ ասա՛, է՛դ ասա՛...

Բ. ԲԱՆԻՈՐ. — Տղերք ջան, հկէք մի քէշ քէՖ անկնք,  
դեռ շատ կանուխ ա...

ԱՄԵՆ ԿՈՂՄԻՑ. — Այո՛, այո՛, այո՛...

(Բանորանքը հափում են: Լարայիմ նազախումքը ան-  
միջապէս գործի է անցնում: Նազում են «ՀՈՎ ԼԻՆԻ» եւ  
բանորանքը երգում են. —

### ՀՈՎ ԼԻՆԻ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լիմի,  
Եարիս տունը ծո՛վ լիմի,  
Թո՛ն՝, քո՛ն՝, քո՛ն՝ լիմի:

Դէ՛, Թըռէ՛ք, Թըռէ՛ք, հողը հանկնք,  
Մեր Թշնամու դողը հանկնք:

Մաղիկ ես ծաղկանց միջին,  
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լիմի,  
Մի հատ ես աղջկանց միջին,  
Եարիս տունը ծո՛վ լիմի,  
Եա՛ր, ինձ պարզերես արա,  
Թո՛ն՝, քո՛ն՝, քո՛ն՝ լիմի,

Ի՛մ ընկեր տըղոց միջին:  
Եարըս քամարով լիմի:  
Դէ՛, քըռէ՛ք, քըռէ՛ք, հողը հանկնք,  
Մեր քըշնամու դողը հանկնք:

Արի, մի փաթպար խաղանք,  
Տնկող մընանք, չը կաղանք.  
Հարսանիքիդ ակիւրը  
Մուղնու ուխտից վաղ աղանք:

Իրար հետ բազր զընանք,  
Ուտենք, խրմենք, լիանանք.  
Թշնամու աչքը հանենք,  
Մեր լուօրից դահանանք:

Խօսք ժողովրդական  
Երածշտ. մշ. Կոմիտասի

(Երգի բնթացում մի գոյգ պարում է ժողովրդական պար):

Ա. ԲԱՆԻՈՐ — Տղերք ջան շուրջ-պար, շուրջ-պար:

Բ. ԲԱՆԻՈՐ — Այդ ևս ձեր հոգուն ճատաղ, մի նազե-  
ցէք «ՀՈՅ ՆԱԶԱՆ ԻՄ» (լարային նագախումբը սկսում է նը-  
ւագել. շուրջ-պարը կազմում է եւ բոլորը երգում են):

## ՀՈՅ ՆԱԶԱՆ ԻՄ

Հո՛յ, նազա՛ն իմ, նազա՛ն իմ,  
Ջա՛ն, նազա՛ն իմ, նազա՛ն իմ.  
Նազե՛ն, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Քոր խոր ձորերով եկար.  
Նազա՛ն, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Քոր խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ևս,  
Հո՛յ, նազա՛ն իմ նազա՛ն իմ,  
Ինձ համար աղունիկ ևս.  
Ջա՛ն, նազա՛ն իմ, նազա՛ն իմ,  
Գրլիխիս վրբով պրտիտ տուր,  
Հո՛յ, նազա՛ն իմ նազա՛ն իմ,  
Նախուն-թեւ թիթեռնիկ ևս:  
Ջա՛ն, նազա՛ն իմ, նազա՛ն իմ,  
Եա՛ր ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,

ՔԼԴ  
Պոր խոր ձորերով եկար:  
Եա՛ր ջան, դու բարով եկար,  
Կեանաչ սարերով եկար,  
Պոր խոր ձորերով եկար:  
Ճամբա տուէ՛ք՝ առաջ դամ,  
Սիրած հարիս բարեւ տամ.  
Ուխտ հմ արեւ, որ առնեմ,  
Թող տեսնի աշխարհ ալամ:

Սարե՛ր, ձորե՛ր, ետ կացէ՛ք,  
Իմ հարի ճամբեն բացէ՛ք.  
Եար հարի հետ խօսելիս  
Ականջ արէ՛ք, իմացէ՛ք:

Նըշի ծառին նուշ կըլինի,  
Վարդի հոտն անուշ կըլինի,  
Երանեկ էն աղջըկան՝  
Սիրած հարին թուշ կը լինի:

Խօսք ժողովրդական

Երածշտ. մշ. Կարա-Մուրգայի, Կոմիտասի եւ Գր. Սիւնիի

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ, ԴՈՐԻՆԵԱՆ, ԾԱՏՈՒՐՈՎ, ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ,  
ՇԻՐԱԿՈՒՆԻ, ՍԱԽԿԱԼԻ ԱՊՏՈՒԼԼԱՆ, ԱԴԱՄ ՍԱՀՐԱՏԵԱՆ,  
ԱՂԱՎԵՐՏԵԱՆ, ՌԱՀԻՄ, ՀԱՍՄԻԿ, ԷԼԻԱ ԵՒ ՈՒՐՇՆԵՐ:

Գ. ԲԱՆԻՈՐ — էլիա, հողուտ մատաղ, մեղի մի նոր  
կենցաղի երգ երգիբ:

Մէկ ԲԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐ — «Կոլխոզի Աղջիկ»ն ենք ու-  
զում:

ԲՈՂՈՐԸ — Այո՛, այո՛, «Կոլխոզի Աղջիկ»ը:

ԷԼԻԱ — (Առաջ է գալիս. սկսում են խանդավառ ծա-  
փահարութիւններ: Ծափահարութիւնը հազիւ վերջացած՝  
էլիան սկսում է երգել. —)

## ԿՈԼԽՈՋԻ ԱՂՋԻԿ

Կանդնել ևս հպարտ, կոլխոդի արտում,  
Այտերդ՝ ձեռքիդ հասկերի պէս վառ.

Ու քո վառ սէրդ է ծաղկել իմ սրտում,

Կոլխոդի աղջիկ, աշերդ, պայծառ

Հե՛յ ջան, հե՛յ ջան, հե՛յ ջան, հե՛յ...

Ջան ջահե՛լ աղջիկ, հաստատ ու յամառ,

Վառ երգեր եմ ես հիւսել քեզ համար:

Մեր ընթացքի հետ այս արադահոս,

Անվախ քայլում ես դու մեզ հետ առաջ.

Դարձել ևս մեր նոր օրերի հերոս,

Կոլխոդի՛ աղջիկ՝ ե՛ւ արի, ե՛ւ քաջ:

Հե՛յ ջան...

Մի անհուն սիրով ևս քեզ սիրեցի

Ծփան արտերի ոսկեվառ գրկո՛ւմ,

Անունդ այնպէս պայծառ գրեցի

Կոլխոդի աղջիկ, իմ սիրո՛ գրքում,

Հե՛յ ջան...

Խօսք Մ. Կոբյունի

Սրածշտ. Դ. Ղազարեանի

**ԴՈՐԻՆԵԱՆ** — (Նրգի վերջաւորութեանը առաջ է գալիս)  
Ընկերներ, մեր քեֆը լաւն էր: Հիմի պէտք է սկսենք ժողովր:

**Ս. ԱՊՏՈՒԼԼԱՀ** — Ո՛չ, ետզաշ Դորինեան, առանց  
«Քէօրօղլին» երգելու կարելի չէ քեֆը վերջացած համարել:

**ԴՈՐԻՆԵԱՆ** — Նոզաշ Ապտուլլահ, քո խառ խաթեր հա-  
մար երգենք նաև «Քէօրօղլին» և ապա անցնինք ժողովի:

Դէ, սկսենք: Լարային խումբը դործի:

**ԼԱՐԱՅԻՆ ԽՈՒՄԲ** — (Սկսում է մագնել):

**ԲՈԼՈՐԸ** — (Ոտքի կանգնած եռանդագին երգում են):

## ՔԷՕՐՕՂԼԻ

Այ Քէօրօղլի, ջան Քէօրօղլի.

Քեզ խարեց Համզան Քէօրօղլի, (հա՛յ, հա՛յ, հա՛յ)

Բայց որ դարձար դու ջաղացպան

Կանչիբ թող դա ջան Քէօրօղլի: (ջա՛ն)

(Ջան Քէօրօղլի ջան

Ջան Քէօրօղլի):

Թէեւ դաթիցը դրկեած

Բայց թուր ունիս վրադ կախած.

Համզան ստրուկ թոկից փախած,

Բայց դու էլի ջա՛ն Քէօրօղլի:

Մարդուս բախտն էլ ահա այսպէս

Պատոււմ է ջաղացի պէս.

Մէկ որ ահռելի վիշապ ես,

Միւս օրն ջաղացպան Քէօրօղլի:

Բայց դու էլի Քէօրօղլին ես,

Ժողովրդի սիրելին ես,

Թէկուդ ջաղացպան էլ լինես.

Քեզ պատիւ կըտան Քէօրօղլի:

Խօսք Ղ. Ազայանի

(աշուղակամ)

**ԴՈՐԻՆԵԱՆ.**— (Սեղանի վրայից գանգակը վերցնելով գանգահարում է. ներկաները սկսում են աքռոներ գրաւել: Մատուրովը նստում է ատենապետի մօտ: Էլյան գրաւում է աջ կողմ գտնուող առջևի շարքերից մի նստարան: Ռահիմը գրաւած է մի աքռո բեմի ձախ կողմը: Նոյնպէս աջ եւ ձախ առջևի շարքերից աքռոներ գրաւում են Ազատուլլահ, Ազա-

վերտեան, Սահրատեան, Շիրակունի եւ այլն: Ետեի շարքերը  
զտնուող բանութեանց ոմանք սիմուշկա են չըքում): Ընկեր-  
նե՛ր, էս օրւա ժողովը միացեալ ա, ձուլարանի եւ հանքերի  
արտադրական յանձնաժողովի եւ նմանապէս բանւորական  
ակաիփի մասնակցութեամբ... Նախ, խնդրում եմ սիմուշկա  
չբիւլը թողնել, էտեղ բազար չի... Հարցը պարզ ա դրւած,  
եւ մենք այս հարցին պէտք ա հիմքից ուշադրութիւն դարձ-  
նենք, քննենք, անայից անենք: Հա՛, մոռցա՛, էս օրւա ժողո-  
վը, բնկերնե՛ր, յայտարարում եմ բացւած: Օրակարգին դըր-  
ւած ա խնջիներ Մատուրովի ղեկուցումը մաղանների զօտման  
մասին, այսինքն պրասմտորի, էլի՛...  
ԾԱՏՈՒՐՈՎ. — Հետազօտման:

ԴՈՐԻՆԵԱՆ. — Հա, հետազօտման: (Մատուրովին դառ-  
նալով կամացուկ) Դիփ մէկ չի՞ հանի, դէ սկսի... (դառ-  
նալով դառնալով) խնդրում եմ նմանապէս լուութիւն պաշտ-  
պանել եւ ակաիփ արտայայտել: Պօսքը տալիս եմ ընկեր ին-  
ջիներ Մատուրովին (բանութեանց ոմանք ծափահարում են):

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Թզրապանակից գրութիւններ հանում  
եւ սեղանին վրա է դնում. ակնոցները մետաքսէ քաշկիմակով  
սրփերով քրիմ վրա տեղաւորում է): Ընկերնե՛ր, իմ ղեկուց-  
ման նիւթն է՝ շմեր հանքերի ներկա դրութիւնը եւ նրանց հե-  
տազօտման խնդիրները: Այսօր ցանկանում եմ ձեզ ծանօ-  
թացնել իմ մտքերի եւ ծրագրերի հետ, որը կարծում եմ  
պէտք է հիմնականին փոխի դրութիւնը եւ փակի մեր պլան-  
ների թւերի եւ սէալ արտադրանքի միջեւ բացւած մկրատը:  
Ես ամբողջ գիշերը լուսացրել եմ այդ կարեւոր դործի վրա:

ԴՈՐՈՇՏԱՆՈՎ. — Ժիշտ է, ամբողջ գիշերը:

ԾԱՏՈՒՐՈՎ. — (Շարունակելով) Մեր արդիւնարներու-  
թեան պատմութիւնը բուականին հին է: Հարիւր, հարիւր  
յիսուն տարուց աւելի...

ՍԱԿԿԱԼԻ ԱՊՏՈՒԼԼԱՀ. — (Ընդմիջելով) Հարիւր ու-  
թանասուն տարի:

Ա. ԲԱՆԻՈՐ. — Ժիշտ ա, հարիւր ութանասուն:

ԾԱՏՈՒՐՈՎ .— Լա՛ւ, թողնենք, ես չեմ ուզում մեր ար-  
դիւնարեութեան պատմութիւնը ձեզ անել, որովհետեւ այս-  
տեղ նստած եմ տեսնում ստաժաւոր հանքափորներ եւ ձուլա-  
րանի վարպետներ, որոնք շատ աւելի լաւ դիտեն այդ պատ-  
մութիւնը:

Ս. ԱՊՏՈՒԼԼԱՀ .— Դրո՛ւստ ա :

ԾԱՏՈՒՐՈՎ .— (Եարուսակելով) Ես պէտք է ասեմ ձեզ՝  
այդ պատմութեան վերջին շրջանի, մեր օրերի մասին, հան-  
քերի ներկա դրութեան մասին: Երբ մտքով վերանում եւ  
չրջում ես հանքահորերում, դրութիւնը քեզ աւելի պայծառ է  
թւում: Թւում է, որ ահադին պղնձաքարեր քնած են հողի  
տակ, բայց երբ դիտութեանն ես դիմում, տեսնում ես, որ  
դրութիւնը այնքան էլ միտթարական չի: Երբ քննում ես հան-  
քերի ընդհանուր պաշարի դիտականօրէն ապացուցած դու-  
մարները եւ այն համեմատութեան դնում արդէն շահագործ-  
ւած դատարկ տարածութիւնների հետ, տեսնում ես, որ դրժ-  
ւար է: Թոյլ տէք ձեզ աւելի պարզ եւ հասկնալի լինելու հա-  
մար, խօսել մի փոքրիկ օրինակով: Ընկոյղը, ամենքդ էլ դի-  
տէք, ամենքիդ էլ ծանօթ է կարծեմ... Նա ունի իր կեղեւը  
եւ կեղեւում բաղմաթիւ խորշեր: Այդ խորշերում պարունակ-  
ւում է հիւթալի միջուկը: Ձեզ ծանօթ է, որ երբ որդ է ընկ-  
նում ընկոյղի մէջ, նախ սկսում է ուտել ամենակենտրոնա-  
կան մասը, ապա կամաց — կամաց ուտելով, փորում, խորաց-  
նում է, կլանելով բոլոր հիւթալի մասերը: Նա՛ յաճախ չի  
կարող մինչեւ կեղեւների խորշերը հասնել եւ սպառել նաեւ  
խորշերում մնացած միջուկը, նա սատկում է՝ այդ խորշե-  
րում թողնելով ընկոյղի աննշան մասերը միայն:

ՌԱՀԻՄ .— (Ձգայնացած) Լա՛ւ, յետո՞...

ԾԱՏՈՒՐՈՎ .— Հա՛, յետո, այժմ պատկերացնենք այս  
մեր պղնձի հսկա լեռը որպէս մի ընկոյղ: (Ոգեւորւած) Ֆը-  
րանսական կապիտալի որդն, ընկերներ, կերել է մեր ընկոյղի  
միջուկը, մեր աշխատաւորութեան սեփականութիւնը լափել  
է: Սակայն նա մինչեւ վերջին խորշերը չի հասել, նա սատ-



կել է... (Ծափահարութիւն)։ Այո՛, սատկել է, բայց իր հետ տանելով մեր հանքերի բոլոր հիւթալի մասերը, այժմ մեզ մնացել է միայն ընկալի կեղեւի խորշերում թաղնւած միջուկը, որի մի մասը արդէն օդատարծել ենք։ Եթէ աւելի շուտ հնչէր ազատարար Հոկտեմբերի յաղթանակը, մենք աւելի շուտ կը սատկեցնէինք այդ որդին եւ մեր սեփական հարստութիւնը կը փրկէինք նրա ձեռից (կրկին ծափահարութիւն, էլիան եւ Ծատուրով իրար մայելով ժպտում են։ Երբ ծափահարութիւնը դադարում է, էլիան բոլորովին յափշտակւած, շարունակում է ծափահարել եւ յանկարծ տեսնելով իր սխալը ամաչում եւ գլուխը վար խոնարհեցնում)։ Այժմ ընկերներ, պարզ է, ես թէ դիտական եւ թէ պատմական փաստերով կարող եմ ապացուցել, որ մեր հանքերի հիմնական պաշարներն սպառած են։ Մեծ յոյսեր կապել հանքերի հետ... առ այժմ չենք կարող։ Այդ է պատճառը, որ, չնայած մեր անսպառ եռանդին, պլանները միշտ հսկայական չափերով ետ են մնում։ Ձեր եռանդը կա, սակայն հանքաքար՝ ո՛չ այնքան։ Ուրեմն Եզրակացութիւնը պարզ է, նախ՝ հարկաւոր է մեր պլանների բարձր թւերը մի փոքր... կրճատել...

ՆԵՐԿԱՆԵՐ. — Ի՞նչ... Ի՞նչ...:

ԾԱՏՈՒՐՈՎ. — Այս մասին ես խօսել եմ նաեւ Բարխուղարեանին հետ, որը դժբախտարար այստեղ չի։ Պլանների փոքր ինչ իջեցումով մենք, նախ՝ հնարաւորութիւն կունենանք դրանք ճիշտ եւ ժամանակին կատարելու եւ, որ իմ երկրորդ առաջարկութիւնն է, ամբողջ ուժերով կ'դրադուենք վերջնական հետազոտութեամբ եւ սպառիչ կերպով կը պարզենք այս քաղթառի (ձեռքը դէպի հանգրիւն) ներքին ողջ պարունակութիւնը։ Գալով հետազոտութեանը, պիտի յայտնենք հետեւեալը՝ Վաթուներորդ հորիզոնին ձեռք տալու կարիք էլ չկա, որովհետեւ ինձ համար հինգ մատիս պէս պարզ է, որ այդ հորիզոնի պղնձի պաշարները համարեա բոլորովին սպառւած են։

Ա. ԲԱՆՆՈՐ. — Քո հօ՛րն ողորմի։

**ԾԱՏՈՒՐՈՎ** — Մեզ մտում է ուշադրութիւն դարձնել Հորիզոն 71-ի, 19-ի եւ 55-ի վրա: Հետազոտական աշխատանքների ընթացքում՝ ինձ խօսք են տւել աջակցել, ինչպէս մեր երիտասարդ երկրաբանները, նոյնպէս եւ իմ բարեկամ, սիրելի Վլադիսլավ Դորբոշտանովը:

**ԴՈՐԲՈՇՏԱՆՈՎ** — (Գլխով հաւանութիւն):

**ԾԱՏՈՒՐՈՎ** — Ահա բոլորը, ինչ որ կ'ասէի, եթէ դուք էլ ինձ հետ համաձայն լինէք, եւ օգնէք ինձ, ապա ես խօսք եմ տալիս հենց վաղը առաւօտն իսկ, դեռ լինենք չկապտած դուրս գալ հետազոտական աշխատանքների: (Դառնալով հաւաքում է քղքերն ու ֆարտէզները եւ նստում է առեմապետի կողքին):

**ԴՈՐԻՆԵԱՆ** — Դուք լսեցիք էնջիներ Մատուրովի ղեկուցումը, հիմի հերթը ձերն է, ո՞վ խօսք է ուզում (բազմաքիւ ձեռքեր վեր են բարձրանում): Առաջին խօսքը ընկեր Ադամ Սահրատեանինն է:

**ՍԱՀՐԱՏԵԱՆ** — (Բեմ ելլելով եւ Մատուրովին ուղղելով) Կեցցե՛ս, ընկեր ինջիներ, լաւ գերեզմանափոր կը լինես: Փորեցի՛ր, թաղեցի՛ր, պրծա՛նք: Պլանները կրճատենք դնանք տուն: (Դառնալով դիմելով) Ջէ՛, ընկերներ՛, այսպիսով ընկեր Մատուրովը մեզ հետու չի տանի, դուրս ա գալիս որ մեր պաշարները պրծել են, իսկ ո՞վ ասաց: Վաթսուներորդ Հորիզոնում ասում ա պաշար չկա... Կեցցե՛ս, լաւ ես հասկանում... գալով բուն խնդրին... Նա որդի օրինակը բերեց, շա՛տ լա՛ւ, ես էլ ուրիշ օրինակ կը բերեմ: Իմ օրինակը էս ա, ընկերներ՛, էս սարի տակին երեք ոսկի ձու կար, մէկը Ֆրանսացին լափեց, մէկի կէսը մենք կերել եւ հլա մէկ ու կէս էլ կա, ո՞ւր ես տանում մեզ, ընկեր Մատուրով: Մէկ ու կէս ոսկի ձու ունենք, պիտի հանենք եւ կը հանենք (ծափահարութիւն):

**ՌԱՀԻՄ** — (Ոգեւորած եւ բռունցքը բարձրացնելով) Կեցցե՛ս, ընկեր Ադամ, կեցցե՛ս...

**ՍԱՀՐԱՏԵԱՆ** — Եւ յետ... (մի քիչ մտածելով եւ ֆա-  
կատը շփելով) լաւ, մնացածը մաքիցս դնաց... թէլը կարեւոյ,  
էսքանն էլ բոլ ա: (Դանիլինը քարճրածայն կը ծիծաղի):

**ԴՈՐՐՆԵԱՆ** — (Ոտքի կանգնելով) Երկրորդ խօսքը ըն-  
կեր Սախկայի Ապտուլլահինն է:

**Ս. ԱՊՏՈՒԼԼԱՀ** — (Բեմ քարճրանում է առանց գլխարկը  
հանելու): Ընկեր ինչիները էդ անիծած որդի պատմութիւնը  
լա՛ւ արեց, դուդ ա՛, նա կերաւ մեր սարերի ջոհարները եւ  
սասակեց, մեր ջանն էլ հետը կերաւ, հարամ ըլլի, նրա կերա-  
ծի պատմութեանը համաձայն եմ, համա ինչիների սասածին  
համաձայն չիմ: Նա ասում ա, թէ՛ Վաթսուներորդ հորիզոնը  
ջոհար չունի, ես՛... Վաթսուներորդը մեր մաղանն ա՛ Սթա-  
լինի մաղանը, բա մեր մաղանումը ջոհար չկա՞... Ձե՛, ետ-  
դաշ Յատուրով, կա, վալլահ կա, եւ շատ կա, ես ջրիցը,  
քարիցն եմ իմանում, որ կա, երեսուն տարի էդ մաղանում  
ջան եմ աւել, աղիս պէս եմ ճանաչում: (Ոգեւորած՝ փա-  
փախը հանում սեղանին վրա է դնում եւ ֆակտի քրտինքը  
չորցնում: Փափախիմ տակը ուրիշ կլոր մի քասակ կա գըլ-  
խիմ վրա, որը ծիծաղ է յառաջացնում): Փլանների կրճատ-  
մանը ես էլ եմ գէ՛մ, ո՞ւմ փլանն ես կրճատում, ետդաշ Յա-  
տուրով, ախր դա մեր փլանն ա, հանդիպականը մենք ենք  
սոսաջարկել, հմի էլ ես վերցնենք, էլ ո՞ւր մնաց մեր նա-  
մուսը, մեր փափախը (աւելի տախացած նա հանում է նաեւ  
պնչակը):

**ԴՈՐՐՈՇՏԱՆՈՎ** — Բանը փափախը չէ:

**Ս. ԱՊՏՈՒԼԼԱՀ** — Բա ի՞նչ ա, ջոհար կա, սխալում  
ես ետդաշ Դորբա—իշխանով, ջոհար կա, դու լաւ ինչիներ  
բեր, աես ինչքա՛ն ջոհար հանի: (Մատուրովիմ դառնալով)  
Վաթսուներորդ հորիզոնում ջոհար շատ կա, ետդաշ Յատու-  
րով, թէ՛ չհաւատաս, մենք ստանց քեզ էլ կարող ենք հանել,  
վալլահ... (Մափեր: Հաւաքելով փափախիմ ու պնչակը վար  
է իջնում բեմից):

**ՌԱՀԻՄ** — (Ոտքի ելլելով) Եաշա՛, ետդաշ Ապտուլլահ,  
եաշա՛...:

ԴՈՐԻՆԵԱՆ — Հիմի խօսքը «Գրոհ» թերթի խմբագիր ընկեր Արշաւիր Ծիրակունտուն է... (ծափեր) :

ԾԻՐԱԿՈՒՆԻ — (Բեմ քարձրամայով) . Պղնձի պաշարների նկատմամբ ընկեր Մատուրովի հանդէս բերած թերահաւատութիւնը մեր հնազոյն բանւորների կողմից արդէն իր արժանի պատասխանը դատաւ : Այդ մասին չէ , որ ես պիտի առարկեմ : Ես պիտի խօսեմ այն մասին , թէ ինչո՞ւ մեր պլանները սխառեմատիկ կերպով թերահաւատութեամբ են : Մխալում է ընկեր Մատուրովը , որ կարծում է պաշարներն են սպառուել : Ո՛չ , այդ նրանիցն է , դիտարկապէս , որ մեղանում աշխատանքը վատ է կազմակերպւած , որ էնժիններների եւ տերներինների ամենօրեա հսկողութիւնը չկա , որ ղեկավարութիւնը կտրւած է հանքերից , որ բանւորական մատակարարման ու սննդի վրա նայում են մատների արանքով , որ չեն կարգաւորում բնակարանային հարցը , դեռ մինչեւ հիմա վակոններում մարդիկ են ապրում : Միթէ՞ սա հանդուրժելի է... սա խայտառկութիւն է , ընկերներ՛ր...

ԴԱՀԼԻՃԸ — (Բարձրաձայն) դրուստ ա՛ , դուզ ա՛ :

ԾԻՐԱԿՈՒՆԻ — (Եարուսակելով) Երբ այս ամենի մասին խօսում ես , մեր յարգելի դիրեկցիան սիրում է իմաստութեամբ լռել : Ես շատ եմ ցաւում , որ այստեղ չի ընկեր Բարխուդարեանը , որպէսզի վճռական պատասխան տար այս կարեւոր հարցին , իսկ թէ ինչո՞ւ նա այստեղ չի , այդ էլ բաւական յատկանշական է : (Աւելի մարտակն Կոնով) Մենք պահանջում ենք վճռական միջոցների դիմել , Առաջին քլումուդից սկսած մինչեւ հնոցը սահմանել երկաթէ կարգապահութիւն : Մենք պահանջում ենք ղեկավարութիւնն աւելի ծօնեցնել արտադրութեան հարցերին մինչեւ նրա մանրուքը : Մենք պահանջում ենք ամենաշտապ կերպով կարգաւորել բանւորական սնունդը եւ սկսել Կարմիր Դարի բնակարանային շինարարութեանը (բուռն ծափեր) :

ԴՈՐԻՆԵԱՆ — (Վեր կենալով) Ուրեմն հանքերի ընդհանուր պրասմոտրին հաւանութիւն տալ , մէջը հաշւած հորի-

դոն 60—ը: Երկրորդ՝ բարձր հիմքի վրա դնել գիտցիպլինան:  
Երրորդ՝ բարելաւել սննդի հարցը: Հա՛, չորրորդ՝ ուշք  
դարձնել բնակարանների կանոնաւորման վրա: Համաձա՞յն  
էք:

ՍԱՀՐԱՏԵԱՆ.— Մէկ էլ, հիմքումն աւելացրու, որ սխալ  
դանել ինժիներ Մատուրովի կարծիքը՝ պղնձի պաշարների  
մասին:

ԴՈՐԻՆԵԱՆ.— Համաձա՞յն էք: (Մեծամասնութիւնը ձեռ-  
քերը վեր բարձրացնում են):

ՎԱՐԱԳՈՅՐ)

## ՊԱՏԿԵՐ Բ.

Բեմը ներկայացնում է պղնձահամֆի մուտքը— փորած ընդարձակ մի վայր: Բեմին ուղղակի դիմացի պատին կեղրոնը փորած նեղ անցքը համֆի խորը տանող համապարհն է, իսկ աջ կողմը փորած անցքը դէպի դուրս ելլելու եւ կամ ներս մտնելու մամրա է: Պատերին մօտ, տեղ տեղ նշմարում են համֆափորների գործիքներ— քահեր, փրիչներ, կաուչուիկ կօշիկներ եւ արտահագուստներ: Ձախ կողմը կաշտ կերպով շինած մի սեղան կա, որի վրա դրած են թուղթեր, համֆերի պլաններ եւ թելեֆոն: Բեմը լուսավորւած է մի քանի կարպիտէ լապտերներով: Ժամանակը կէս գիշերը անց է:

### ՏԵՍԻԼ Ա.

*ԱՂԱՄ ՍԱՀՐԱՏԵԱՆ, ՍԱԽԿԱԼԼԻ ԱՊՏՈՒԼԼԱՀ, ՌԱՀԻՄ ԵՒ ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԻՈՐՆԵՐ:*

**ՍԱՀՐԱՏԵԱՆ** — (Թուրքը միասին դուրս են գալիս համֆի միջից: Ռահիմը եւ երկու բանուրները փորելու գործիքներ եւ կարպիտէ լապտերներ ունեն իրանց ձեռքը: Ուշադրութեամբ դիտում են Ադամի ձեռքը բռնած քարերին: Ադամը լեզուով քարերը փորձելով) *Ա՛յ, իրական ջոհար ա՛, լեզուս նստեց, խտո՛ւտ ա տալիս: Ա՛յ դուրսդան ձեզ տղերք, ջոհար ա, ամժա ի՛նչ ջոհար:*

**Ս. ԱՊՏՈՒԼԼԱՀ** — (Քարերից մին Ադամի ձեռքից առնելով՝ լեզուով փորձում է): *Ճիշտ ա, եռլաշ Ադամ, ջոհար, ինչ խալիս ջոհար: Եռլաշլա՛ր, էս մեր վերջին դիշերն ա, մի անգամ էլ պայթեցնենք, էս մադանի հսկա պաշարներին կը հասնենք, թէ չէ՝ ես էս սախկալը կածիլեմ:*

**ՌԱՀԻՄ** — *Մենք մեր վարպետներին խօսք ենք տալիս՝ այս հանքից դուրս չգալ այս դիշեր մինչեւ վերջնական յաղթանակ:*

**ՍԱՀՐԱՏԵԱՆ** — *Ապրե՛ք, տղերք ջա՛ն, ձեզ տեսնեմ, էս պատու դորժ ա:*

**Ս. ԱՊՏՏՈՒԼԼԱՀ.** — (Ռահիմի եւ միւս համափորքերի կոնակը շոյելով) *Մեր նամուսը բարձր բռնեցէք, դինամիաները լաւ դեակեցէ՛ք, լաւ պայթեցուցէ՛ք, շատ ջոհար ա դուրս դալու:*

**ԱՄԵՆՔԸ.** — *Դրուստա՛, դրուստա՛:*

**ՍԱՀՐԱԴԵԱՆ.** — *Հիմի՛, ետլդաշ Ապտուլլահ, մենք երթանք հիւանդանոցում ընկեր Սեդրակին մեր յաղթանակը աւետենք: Այս ջոհարները նրան ուրախացնելու են:*

**Ս. Ապտուլլահ.** — *Դրուստա՛, դրուստա՛, ջոհարին մէկ կտորն էլ լապարաթորիա տանենք, հիմի տեսնենք քանի տոկոս քրախըրք ունի:*

**ՍԱՀՐԱԴԵԱՆ.** — (Մի քանի հատ դինամիտներ առնելով սեղանի վրայից) *Ռահիմ՛, ա՛ն սա դինամիտները, բայց շատ զգոյշ, լաւ դեակիր, եւ չըլլա որ ամենը չպայթած հանք մտնէք: Զեղ տեսնեմ: Քիչ յետո վարպետ Մինասի Բրիգատն էլ ձեզ օգնութեան կգա: (Սաիրադեամ եւ Ապտուլլահ մեկնու մեմ):*

**ՌԱՀԻՄ.** — *Ընկերներ, ես ձեզ վստահեցնում եմ, որ այս գերջին դինամիտներն են, որ մենք պայթեցնելու ենք այս գիշեր, եթէ ոչ հանքից դուրս չենք դալու. համաձա՞յն էք (Երեքը իրարու ձեռք եմ սեղմում): Եթէ բախտը ժպտաց, վաղոնեակները հանքաքար կը բառնանք եւ կը քշենք հիւանդանոց, մեր սիրելի Սեդրակին քով: Նա մեր հերոսն է, նա իր կեանքը վտանգեց մեզ քաջալերելու համար: Հաւատացնում եմ ձեզ, որ նա ուրախութիւնից լաց կը լինի:*

**Ա. ԲԱՆԻՈՐ.** — *Ճիշտ ա՛, ճիշտ ա՛, Սեդրակի նման դեկալարի համար մեր կեանքը կտանք (սկսում եմ քալել դէպի համի խորքը: Այս միջոցին ներս է գալիս Էլիամ):*

**ՏԵՍԻԼ Բ.**

**ՆՈՅՆՔ ԵՒ ԷԼԻԱ**

**ԷԼԻԱ.** — (Մագերը խառնաշփոք, քնատ դէմքով եւ այլայլած) *Ռահիմ՛, Ռահիմ՛, ներքի՛ր ինձ (հեկեկում է եւ քաշկիմակով արցունքները չորացնում):*

ՌԱՀԻՄ — (Զարմացած ետ է նայում) էլի՜ա՛, ... ի՞նչ  
ես անում հոս գիշերւա այս պահուն: Ծառուերովի քով  
չերթա՞ս:

ԷԼԻԱ — Ռահիմ, Ռահիմ Զալատո, ների՛ր ինձ: Ես իմ  
սէրը դաւաճանեցի: Ծառուերով եւ իր ընկերը արդէն խոր-  
հորդային սահմաններէն դուրս փախել են: Ես չէի գիտեր,  
որ նա մեր սոցիալիստական հայրենիքի դաւաճանն էր: Խաբ-  
ւել եմ, չարաչար խաբւել:

ՌԱՀԻՄ — Էլի՜ա, ես վճռած եմ այս գիշեր այս հանքից  
յաղթական դուրս դալ: Հանքաքարերի առաջին վազոնը ես  
իմ ձեռքով բառնալու եմ եւ Սեդրակին տանելու: Հիմա քեզ  
հետ խօսելու ատեն չունեմ: (Ընկերներին դառնալով) զնանք  
ընկերնե՛ր (Ռահիմ եւ ընկերները համբ եմ մտնում):

ԷԼԻԱ — (Աչքերը յարած դէպի համբը տանող մեղ անցքը,  
ձեռքերը երկնցնելով) Ռահիմ ջան, Ռահիմ Զալատո, մի  
անգամ էլ դաստակա բռնիք ու քարշ տուր ինձ քո ետեւից, մի  
անգամ էլ խօսիր այն ներկական բառերը, որ ասում էիր իմ  
երազում, — զնանք իմ լաւ աղջիկ... Պարսկաստանում էլ  
յեղափոխութիւն կը լինի... ես կը դառնամ Պարսկաստանի  
կոմսոմոլի քարտուղարը... իսկ դու... իմ լաւ ընկերը...  
գինակի՛ցը... իմ կինը: Ա՛խ, Ռահիմ ջան, երանի՛ թէ. այդ  
խօսքերը մի անգամ էլ ասիր ինձ իրական կեանքում: Ես  
քեզ հետ կը զնամ մինչեւ վերջին կայարան եւ այս անգամ  
ոչ մի մարդ գիտ չի կարող շեղել իմ հարազատ սիրո ճանա-  
պահից: (Մտնում է սեղանին, նստում եւ գլուխը քեւերին  
մէջ սեղմած՝ լաց լինում: Այս միջոցին վարպետ Միմասի  
բրիգադն էլ ներս գալիս եւ համբ եմ մտնում): Ո՛հ, Ռահիմ  
ջան, Ռահիմ Զալատոյ, իմ պաշտելի Ռահիմ: Յիշո՞ւմ ես,  
անտառում մի հաստ ծառի վրա փորագրեցինք մեր անունների  
առաջին տառերը: Ես անցեալ օրը տեսա, այդ տառերը դեռ  
այնտեղ են, իրար մօտ, իրար կպած: Ծառն՝ փնձ նման ապե-  
րախտ չի, նա չի դաւաճանել, չի մոռացել մեր սէրը: (Համբի  
խորհից լուում եմ մի քանի պայքիւններ, էլիան սարսափա-  
հար վեր ցատկում եւ համբի ուղղութեամբ նայում):



ՏԵՍԻՒ Գ.

ԷԼԻԱ ԵՒ Ա. ԲԱՆԻՈՐ

Ա. ԲԱՆԻՈՐ — (Համփից դուրս գալիս հեւալով) Շո՛ւտ, էլիա, թելեֆոն արա, հիւանդանոց, արկած կա, արկած... .

ԷԼԻԱ. — (Լսափողը վերցնելով) Շտա՛ւ պ, շտա՛ւ պ, արկած, արկած, Վաթսուներորդ հարիզոնում (դառնալով բանուորին) Ո՞վ, ո՞վ մտաուեցաւ, չի լինի թէ... .

Ա. ԲԱՆԻՈՐ. — Ռահիմը... .

ԷԼԻԱ. — Այ... .ի... . (լսափողը ձեռքից վար է ընկնում եւ ինքն էլ ընկնում է սեղանին վրա՝ մարած վիճակում):

ՏԵՍԻՒ Գ.

ԺԺԻՇԿ, ԵՐԿՈՒ ԿԱՐՄԻՐ ԽԱՉՈՒՀԻՆԵՐ, ԱԴԱՄ ՍԱՀՐԱԴ-ԵԱՆ, ՍԱԽԿԱԼԼԻ ԱՊՏՈՒԼԼԱՀ, ԲԱՆԻՈՐՆԵՐ:

(Բժիշկը, մերմակ հագած, երկու Կարմիր Խաչուհի-ներ, Ադամ Սաիրադեան եւ Սախկալլի Ապտուլլահ բեմ են գալիս եւ ուղղում են դէպի համփը: Նոյն միջոցին երկու բանուորներ ուսերի վրա դրած Ռահիմի անշնչացած մարմինը, համփից դուրս են բերում: Կարմիր Խաչուհիներից մին վազում է էլիայի տոլ եւ նրա քեւերը եւ մակառը շփելով ար-քընցնում եւ նրան օգնում է: Մի քանի բանուորներ սեղանը քաշում են բեմի միջտ մէջտեղը եւ մարմինը տեղաւորում սեղանի վրա: Կարմիր Խաչուհիներից մին օգնում է բժիշկին հանել Ռահիմի արտահագուստը: Բժիշկը սկսում է քննել Ռահիմը: Բոլորը խոր լուսքեամբ եւ հետաքրքրուքեամբ դիտում են նրան):

ԷԼԻԱ. — (Հեկեկալով) Դոկտո՛ր, դոկտո՛ր, ի՞նչպէս է Ռահիմը:

ԲԺԻՇԿ. — (Գլուխը շարժելով եւ աչքի արցումքը չորցնելով) Ռահիմը մեր հերոսն է: Սոցիալիզմի յաղթանակին համար նա իբր կեանքը նւիրեց (ոուր մերկամերթ խոնարհում են եւ ումամբ հեկեկալով աչքերնին չորացնում քաշկիմակով):

ԷԼԻԱ. — Ռահիմ ջան, Ռահիմ Ջալաւոյ, իմ լա՛ւ Ռա-

հիմ (հեկեկալով նրա վրա ընկնում է բայց բանւորները նրան  
ես եմ քաշում) :

**ՄԱՀՐԱՆԵԱՆ** — Ընկերներ, ես ասում-էի որ մեր հան-  
քերում շատ ջոհար կա եւ մենք յաղթանակը տարինք... Գա-  
լով բուն խնդրին, ես պիտի ասեմ, որ մեր սիրելի Ռահիմի  
մահը շատ ծանր ասեղ համար: Նա մի էնպիսի տղա էր, որ  
ճրագով ման դաս, անջախ դռնես... հիմի՛, դալով բուն  
խնդրին, ես ասում եմ որ մենք պէտք է դիմենք մեր կոմսո-  
մոլին, որ ջան դնի, Ռահիմի պէս աշխատի եւ դառնա մեր  
Մարքս-Լենինեան կոմունիստական կուսակցութեան արժանի  
առաջնորդը... Ո՛վ որ շատ էր սիրում Ռահիմին, վաղանից  
հանքերը... :



**ԷԼԻԱ** — (Հեկեկալով) Տէ՛ջ ինձ նրա արտահայտու-  
թիւնը, ես նրան շատ էի սիրում... (սկսում է հագնել) Ես հանք  
պիտի դնամ... Վաթսուներորդ Հորիզոնը...

**ՏԵՍԻԼ Ե.**

**ՆՈՅՆՔ ԵՒ ՍԵՂՐԱԿ**

**ՍԵՂՐԱԿ** — (Մէկ ոտքը փաքաքւած ներմակ լաքերով,  
յեմած երկու բանւորների ուսին՝ բեմ է գալիս եւ բոլորը զար-  
մացած նրան եմ նայում: Նա մտեմալով սեղանին) Ընկեր-  
ներ, Վաթսուներորդ Հորիզոնում մեր պրոլետարիատը բոլ-  
շեվիկեան քննութիւն բռնեց, նա ցոյց տուց, թէ ինչպէս կա-  
րող է հրաշքներ գործել եթէ ցանկանա: Նա ջախջախիչ հար-  
ւած իջեցրեց հակա-յեղափոխականների, վնասարարների եւ  
ամեն տեսակ թերահաւատների դիտին: Բայց նա ունեցաւ  
նաեւ մեծ, ես կասէի՝ դժուար փոխարինելի կորուստ: Մենք  
այդ կորուստը պիտի դարձանենք մեր ընդունակ կոմսոմոլի  
շարքերից նոր Ռահիմներ պատրաստելով: Կուսակցութիւնը  
Ռահիմին պիտի տա հերոսի արժանի յուղարկաւորութիւն եւ  
յետո պիտի տունենք մեր յաղթանակը:

**ԷԼԻԱ** — (Լացը դադրեցնելով եւ խիզախ կեցւածով  
բռունցքը վեր բռնած) «Ե՛լի՛ք, ու՛մ կեանքն անիծել է՛ք: (Բո-  
լորը սկսում են երգել ինտերնացիոնալը):



C 3 07

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026679

A <sup>11</sup> 26679